Հաստատված է
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի
2025 թվականի հունիսի 30-ի N 7-Լ որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ФОНД "ДОРОЖНЫЙ ДЕПАРТАМЕНТ"
"ROAD DEPARTMENT" FUND

ԵՐԵՎԱՆ
2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ 2
ՆԱԽԱԲԱՆ 3
1. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 5
2. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 12
3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 17
3.1 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 2 20
3.2 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ-3 26
3.3 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 3 30
3.4 ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ՏՐԱՆՇ 4 Քաջարան-Ագարակ ճանապարհահատված 34
3.5 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4 Քաջարանի թունելի և մոտեցումների կառուցման ծրագիր 39
3.6 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4 Սիսիան-Քաջարան 60կմ ճանապարհահատվածի կառուցման ծրագիր 43
3.7 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ՏՐԱՆՇ 4 Արտաշատ-Սիսիան շուրջ 162 կմ հատվածի վերակառուցման հեռանկարային ծրագիր 49
3.8 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 5 Գյումրու շրջանցիկ և Քեթի-Բավրա ճանապարհահատված 50
3.9 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ-6 ՎԱՆԱՁՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ 53
3.10 ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԻ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 57
3.11 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ 62
4. ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 67
5. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 72
6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 77
7. ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ 84
8. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 90
9. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԻՐԱՁԵԿՈՒՄ 91

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ
(2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ)

- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ)**
- **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահ**
- **Կադաստրի կոմիտեի ղեկավար**
- **ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ**
- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհաշինության ոլորտը համակարգող)**
- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ (գնումների քաղաքականության ոլորտը համակարգող)**
- **Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ (հանրային ներդրումների ոլորտը համակարգող)**
- **Փոխվարչապետի (ենթակառուցվածքների ոլորտը համակարգող) գրասենյակի ղեկավար**
- **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար**
- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական (ճանապարհաշինության ոլորտի մասով):**

2024 թվականի ընթացքում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնը զբաղեցրել են՝

- **Գոռ Ավետիսյանը (08.02.2022թթ.-03.07.2024թթ.)**
- **Սերժիկ Պետրոսյանը (պարտականությունները ժամանակավոր կատարող՝ 03.07.2024թթ.-04.09.2024թթ.)**
- **Արմեն Զոհրաբյանը (04.09.2024թթ.-08.04.2025թթ.):**

ՆԱԽԱԲԱՆ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

Հիմնադրամի հիմնադրի անունից, որպես պետական լիազոր մարմին, հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Հիմնադրամը ստեղծվել է վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Հիմնադրամը հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է. ունի իրավաբանական անձի կարգավիճակ:

Հիմնադրամի գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներն են՝

1) հիմնադրի ներդրումը.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

3) դրամական մուտքերը պետական բյուջեից.

4) դրամաշնորհները.

5) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

6) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում).

7) օրենքով չարգելված այլ միջոցներ:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ խորհուրդ), որը ղեկավարում է Հիմնադրամի գործունեությունը՝ համաձայն Հիմնադրամի կանոնադրության:

Հիմնադրամի գործադիր մարմինը գործադիր տնօրենն է, որը վարում է Հիմնադրամի ընթացիկ գործերը և հաշվետու է խորհրդին:

Ստորև կներկայացվեն 2024 թվականի ընթացքում կատարված աշխատանքներն՝ ըստ ծրագրերի, անդրադարձ կկատարվի ավտոմոբիլային ցանցի զարգացման, նպատակային օգտագործման և պահպանման նպատակով պետական քաղաքականության մշակմանն օժանդակելուն ուղղված գործառույթներին՝ երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրում, ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում, ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում և այլն, ինչպես նաև կներկայացվի տեղեկատվություն Հիմնադրամի աշխատակազմի, դատական գործերի և հանրությանն իրազեկման վերաբերյալ:

Հիմնադրամն իր գործունեության ընթացքում գրանցել է նշանակալի և ակնհայտ ձեռքբերումներ, վստահ ենք, որ ապագայում կարձանագրենք նոր նվաճումներ և կունենանք արդեն ձևավորված և հաստատում մշակույթ ճանապարհաշինության ոլորտում:

Հաշվետվության մեջ օգտագործվող հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը.

ԱԶԲ- Ասիական Զարգազման Բանկ

ՎԶԵԲ - Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ

ԵՆԲ - Եվրոպական ներդրումային Բանկ

ՇՄԱԳ - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՀՀՃՄՆԾ - Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր

ՃՏՊ - ճանապարհատրանսպորտային պատահար

ՃԵԿ - ճանապարհային երթևեկության կանոններ

ՀՕՏԾ - Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր

1. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ճանապարհաշինության բնագավառում կատարվելիք գնումների դեպքում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամն իրականացնում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները:

2024 թվականի ընթացքում իրականացվել են 333 կմ ընդհանուր երկարությամբ պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, վերակառուցման և կառուցման աշխատանքներ, որից 119 կմ՝ միջպետական, 109,02 կմ՝ հանրապետական, 105 կմ՝ մարզային նշանակության ճանապարհահատվածներ: Ճանապարհահատվածների հիմնանորոգման, վերակառուցման և կառուցման աշխատանքների շրջանակներում հիմնանորոգվել և վերականգնվել են նաև շուրջ 44 կամրջային անցումներ, տեղադրվել են 121294 գծմ մետաղական արգելապատնեշներ, 9433 ճանապարհային նշաններ:

հ/հ	Օբյեկտի անվանումը	2024թ-ին իրականացված Ընդամենը /կմ/	Մարզ
	Միջպետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	**119.0**	
1	Մ-1, Երևան-Գյումրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ160+200-կմ171+700 հատվածի հիմնանորոգում	11.50	Շիրակ
2	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ182+532 - կմ190+000 հատվածի հիմնանորոգում	0.17	Սյունիք
3	Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի- Տաթև - /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհահատվածի կառուցում **(II փուլ)**	11.00	Սյունիք
4	/Մ-2 /-Տաթև-Աղվանի-/Մ-2 /(Սյունիք) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ19+500 հատվածի հիմնանորոգում	11.00	Սյունիք
5	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ297+800-կմ311+250 հատվածի հիմնանորոգում (1-ին տեղամաս՝ կմ297+800-կմ301+820 հատված)	4.02	Սյունիք
6	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ297+800-կմ311+250 հատվածի հիմնանորոգում (2-րդ տեղամաս՝ կմ301+820 - կմ311+250 հատված)	5.53	Սյունիք
7	Մ-3, ՀՀ սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ35+535-կմ39+500 հատվածի հիմնանորոգում	5.00	Արագածոտն
8	Մ-3, ՀՀ սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ116+790 (կմ116+900) - կմ128+718 (կմ127+900) հատվածի հիմնանորոգում	11.84	Լոռի
9	Մ-4, Սևանի տրանսպորտային հանգույց	2.70	Գեղարքունիք
10	Մ-5, Երևան - Արմավիր - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ17+530-կմ18+200, կմ25+593 - կմ29+385 և կմ32+675 - կմ33+833 աջակողմյան և ձախակողմյան հատվածների հիմնանորոգում և Մ-5, Երևան - Արմավիր - ՀՀ սահման ա/ճ-ի կմ 35+457 - կմ 37+054 ջրահեռացման համակարգի վերականգնում	4.32	Արմավիր
11	Մ-5, Երևան - Արմավիր - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ58+400-կմ63+100 հատվածի հիմնանորոգում	4.70	Արմավիր

12	Մ-6, Վանաձոր – Ալավերդի – ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի ՊԿ384+50 - ՊԿ481+40 /ՊԿ467+50 – ՊԿ473+61/ տեղամասի (Օձունի խաչմերուկի /Մ6 և Հ35/ ավտոճանապարհների փոխհատում) վերականգնում և բարելավում	0.68	Լոռի
13	Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ) - Դիլիջան միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+236 - կմ6+236 հատվածի (Վանաձոր քաղաքի հատված) հիմնանորոգում	5.60	Լոռի
14	Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ40+000-կմ42+000 հատվածի հիմնանորոգում	2.00	Տավուշ
15	Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+590-կմ94+590 հատվածի հիմնանորոգում	14.00	Գեղարքունիք
16	Մ-12, /Մ-2/ (Գորիս) – ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ4+000 հատվածի հիմնանորոգում	4.00	Սյունիք
17	Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ72+800 - կմ78+100 հատվածի հիմնանորոգում	5.30	Գեղարքունիք
18	Մ-15, /Մ-4/ (Վերին Պտղնի) - Մասիսի տրանսպորտային հանգույց (Երևանի շրջանց) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ8+200 հատվածի հիմնանորոգում	8.20	Կոտայք
19	Մ-15, /Մ-4/ (Վերին Պտղնի) - Մասիսի տրանսպորտային հանգույց (Երևանի շրջանց) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ19+900-կմ29+400 հատվածի հիմնանորոգում	7.40	Արարատ
	Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	**109.02**	
1	Հ-1, Վ. Պտղնու տրանսպորտային հանգույց - Ջրաբեր-Հրազդան -Հրազդանի քրեակատարողական հիմնարկ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ33+500 - կմ37+700 հատվածի հիմնանորոգում	2.50	Կոտայք
2	Հ-1, Վ. Պտղնու տրանսպորտային հանգույց - Ջրաբեր-Հրազդան -Հրազդանի քրեակատարողական հիմնարկ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ21+700 - կմ24+000 հատվածի հիմնանորոգում	1.54	Կոտայք
3	Հ-3, Երևան (Ջրաշխարհ, Մ-4-ի հետ հատման տեղ)-Գառնի –Գեղարդի վանք հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ33+500-կմ38+100 հատվածի հիմնանորոգում	4.60	Կոտայք
4	Հ-7, /Հ-5/ - Կարենիս - Չարենցավան /Հ-1/ (Ֆանտան)հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ7+580 - կմ10+200 հատվածի հիմնանորոգում	1.32	Կոտայք

5	Հ-15, /Մ-5/(Նորապատ) -Արգավանդ –/Մ-3/ (Վարդանաշեն) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ3+000 հատվածի հիմնանորոգում	3.00	Արմավիր
6	Հ-16, /Մ-5/ - Մեծամոր – ՀԱԷԿ - /Մ-5/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+700 հատվածի հիմնանորոգում	10.70	Արմավիր
7	Հ-21, /Հ-75/ - Հոռոմ-Արթիկ-Ալագյազ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ29+600 - կմ32+700 հատվածի հիմնանորոգում	3.10	Շիրակ
8	Հ-26, /Մ-4 /-Ենոքավան–Կարմիր գյուղ (գյուղատեղի)-/Մ-16/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ6+300 հատվածի հիմնանորոգում	6.30	Տավուշ
9	Հ-36, /Մ-4/ (Իջևան) - Նավուր - Բերդ - Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ5+600 - կմ42+100 հատվածի հիմնանորոգում	13.60	Տավուշ
10	Հ38, /Հ-30/ (Թթուջուր) – /Հ-36/ (Նավուր) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ15+100 հատվածի հիմնանորոգում	10.60	Գեղարքունիք
11	Հ-55, Հրազդանի տրանսպորտային հանգույց-Ծաղկաձորի մարզահամալիր հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+500 հատվածի հիմնանորոգում	4.60	Կոտայք
12	Կիրանց գյուղի հատվածում Հ-58 հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի շրջանցիկ հատվածի կառուցում	0.71	Տավուշ
13	Հ-70, Մ-6 – Աթան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ27+500 հատվածի հիմնանորոգում	21.00	Լոռի
14	Հ-75, Մ-9-Իսահակյան-Գյումրի-Մ-7 հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ23+250 - կմ37+500 և կմ45+300 - կմ60+200 հատվածների հիմնանորոգում	24.65	Արագածոտն, Շիրակ
15	Հ85, /Հ-1/ - Հրազդան - /Հ-55/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ1+600 - կմ3+300 հատվածների հիմնանորոգում	0.80	Կոտայք
	Մարզային նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	**105.0**	
1	Տ-1-35, /Հ-81/ (Հացաշեն) - Սորիկ ավտոճանապարհի կմ0+000 - կմ5+100 հատվածի հիմնանորոգում	4.50	Արագածոտն
2	Տ-1-44, /Մ-3/ (Ապարան) - Լուսագյուղ ավտոճանապարհի կմ0+000-կմ3+000 հատվածի հիմնանորոգում	3.26	Արագածոտն
3	Տ-1-62, /Հ-4/ - Երնջաթափ - Շողակն ավտոճանապարհի կմ0+000-կմ3+400 հատվածի հիմնանորոգում	3.40	Արագածոտն
4	Տ-1-63, /Հ-81/ (Թաթուլ) – Կանաչ - Հակո ավտոճանապարհի կմ0+000 - կմ12+100 հատվածի հիմնանորոգում	12.50	Արագածոտն

5	Տ-1-68, Ներքին Բազմաբերդ (Տ-1-65) – Կաքավաձոր (Տ-1-60) ավտոճանապարհի կմ0+000 – կմ4+100 հատվածի հիմնանորոգում	2.90	Արագածոտն
6	Տ-3-14, /Մ-5/-Մրգաշատ-Ալաշկերտ-գ.Արմավիր (Տ-3-16) ավտոճանապարհի կմ0+000 - կմ1+300, կմ3+000-կմ4+200 և կմ4+700-կմ6+200 հատվածների հիմնանորոգում	1.80	Արմավիր
7	Տ-3-16 Արևիկ (Տ-3-50) – /Հ-15/ (գ.Արմավիր) ավտոճանապարհի կմ0+000-կմ3+600 հատվածի հիմնանորոգում	3.60	Արմավիր
8	Տ-3-18, Ակնալիճ (Տ-3-6) – Զարթոնք – Արևիկ (Տ-3-50) կմ0+000-կմ3+628 հատվածի հիմնանորոգում	0.30	Արմավիր
9	Տ-3-44, /Մ-5/ – Ծիածան – Աղավնատուն – Լեռնամերձ կմ0+000-կմ7+300 հատվածի հիմնանորոգում	7.05	Արմավիր
10	Տ-3-52 /Մ-5/ – Ամասիա – Նալբանդյան (Տ-3-11) – Ջանֆիդա – Փշատավան – /Հ-15/ (Արգավանդ) ավտոճանապարհի կմ14+200-կմ18+400 հատվածի հիմնանորոգում	4.20	Արմավիր
11	Տ-3-61, /Մ-5/ (Նորապատ) - /Հ-17/ ավտոճանապարհի կմ0+000-կմ1+700 հատվածի հիմնանորոգում	1.59	Արմավիր
12	Տ-4-13, /Հ-39/ (Գավառ) – Գանձակ – Սարուխան – Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգում	6.50	Գեղարքունիք
13	Տ-4-78, /Տ-4-40/ - Նորակերտ - /Մ-14/ (Փոքր Մասրիկ) ավտոճանապարհի կմ5+200-կմ7+200 հատվածի հիմնանորոգում	2.00	Գեղարքունիք
14	Տ-5-24, /Մ-3/ (Ստեփանավան) – Արմանիս – Ուրասար – Կաթնաղբյուր տեղական նշանակության ավտոճանապարհի կմ6+600-կմ 15+200 հատվածի և Կաթնաղբյուր համայնքի 8-րդ և 9-րդ փողոցների հիմնանորոգում	1.95	Լոռի
15	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Զարենցի փողոցի 1.725կմ հատվածի և Արևելյան փողոցի 0.120 կմ հատվածի հիմնանորոգում	0.10	Լոռի
16	ՀՀ Լոռու մարզ Վանաձոր համայնքի Տ. Մեծի պողոտայի հիմնանորոգում	0.96	Լոռի
17	ՀՀ Լոռու մարզ Վանաձոր համայնքի Սանկտ - Պետերբուրգի փողոցի հիմնանորոգում	1.75	Լոռի
18	Տ-5-46, /Մ-6/(Ալավերդի) - Սանահին թաղամաս - Ակներ ավտոճանապարհի կմ0+000 - կմ9+300 և Տ-5-46-ից դեպի Սանահին վանական համալիր տանող հատվածների հիմնանորոգում	9.52	Լոռի
19	Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի դեպի Կաքավաձոր թաղամաս տանող ճանապարհի հիմնանորոգում	2.00	Կոտայք
20	Տ-7-53, Հ-21/ (Նոր Կյանք) – Փանիկ - Արևշատ - /Հ-21/ (Մեծ Մանթաշ) ավտոճանապարհի կմ0+000 - կմ12+800 հատվածի հիմնանորոգում	12.80	Շիրակ

21	Տ-8-56, /Մ-2/ - Հարժիս ավտոճանապարհի կմ0+000 - կմ8+000 հատվածի հիմնանորոգում	6.90	Սյունիք
22	Տ-10-9, /Հ-36/ - Չինչին (Տ-10-38) ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+000 հատվածի հիմնանորոգում	6.90	Տավուշ
23	Տ-10-30, /Մ-16/ - Աճարկուտ - Կիրանց պատմական հուշարձան ավտոճանապարհի 3,5 կմ երկարությամբ հատվածի վերակառուցում	4.11	Տավուշ
24	Տ-10-34/Մ-4 /-Լեռնային Հայաստան առողջարան ավտոճանապարհի կմ0+000-կմ2+200 հատվածի հիմնանորոգում	2.20	Տավուշ
25	Որոտան-Խոտ ավտոճանապարհի վերակառուցում	2.20	Սյունիք

2024 թվականին ՀՀ պետական բյուջեի «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում հատկացման և վերաբաշխման գումարը կազմում է 56.2 մլրդ դրամ, որն իր մեջ ներառում է նոր նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, 2023 թվականի շինարարական աշխատանքների դիմաց չվճարված պայմանագրերի ընդհանուր գնի 5 տոկոսի վճարման, 2023 թվականից 2024 թվական փոխանցիկ օբյեկտների, ինչպես նաև՝ 2024 թվականին իրականացվելիք շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների համար անհրաժեշտ գումարները:

Վերոնշյալ միջոցառման ապահովման համար 2024 թվականին նախատեսված ֆինանսական միջոցների փաստացի ծախսը կազմել է 52.7 մլրդ դրամ (92.6%):

2024 թվականին ՀՀ պետական բյուջեի «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում նախատեսված տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և վերակառուցման համար կնքված կապալի պայմանագրերի շրջանակներում 2024 թվականին նախատեսվել և համաձայնագրեր են կնքվել թվով 10 հատ տրանսպորտային օբյեկտների (8 հատ կամուջ, 2 հատ տրանսպորտային հանգույց) շինարարական աշխատանքների համար:

2024 թվականին 8 տրանսպորտային օբյեկտի (7 կամուրջ, 1 տրանսպորտային հանգույց) շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են, իսկ 1 կամրջի և 1 տրանսպորտային հանգույցի շինարարական աշխատանքների ավարտը նախատեսված է 2025 թվականին:

Նշված միջոցառման շրջանակներում 2024 թվականի համար հատկացման և վերաբաշխման գումարը կազմում է 1.8 մլրդ դրամ, որն իր մեջ ներառում է նոր նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, 2023 թվականի շինարարական աշխատանքների դիմաց չվճարված պայմանագրերի ընդհանուր գնի 5 տոկոսի վճարման, 2023 թվականից 2024 թվական փոխանցիկ օբյեկտների, ինչպես նաև՝ 2024 թվականին իրականացվելիք շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների համար անհրաժեշտ գումարները:

Վերոնշյալ միջոցառման ապահովման համար 2024 թվականին նախատեսված ֆինանսական միջոցների փաստացի ծախսը կազմել է 1.5 մլրդ դրամ (86.3 %):

2. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հիմնադրամն իր իրավասությունների շրջանակներում հսկողություն է իրականացնում է ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների նկատմամբ:

Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգումն իրենից ներկայացնում է ավտոմոբիլային ճանապարհի պատվածքի մաշված վերին շերտը վերականգնելու, ավտոմոբիլային ճանապարհի, արհեստական կառույցների, ինչպես նաև ճանապարհային կահավորանքի շինարարական նորմերով նախատեսված սկզբնական որակական ցուցանիշների ապահովման նպատակով իրականացվող նորոգման աշխատանքներ:

2024 թվականի ընթացքում միջին նորոգման աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերում:

2024 թվականին ՀՀ պետական բյուջեի «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի շրջանակներում նախատեսված է եղել միջին նորոգման աշխատանքներ իրականացնել միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շուրջ 107,7 կմ հատվածներում, փաստացի կատարվել է 122,6 կմ:

ՀՀ կառավարության 2021-2026թթ. ռազմավարության ծրագրով նախատեսված ճանապարհաշինության զարգացման ոլորտում իրականացվող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհային ցանցի որակի շարունակական բարձրացման նպատակով ՀՀ 6 մարզերում միջին նորոգման ծրագրերով իրականացվել են ճանապարհի պատվածքի մաշված վերին շերտի վերականգնման, արհեստական կառույցների, ինչպես նաև ճանապարհային կահավորանքի շինարարական նորմերով նախատեսված սկզբնական որակական աշխատանքներ, մասնավորապես՝ Կոտայքի մարզ՝ 18,269 կմ, Տավուշի մարզ՝ 23,323 կմ, Շիրակի մարզ՝ 20,253 կմ, Գեղարքունիքի մարզ՝ 40,307 կմ, Լոռու մարզ՝ 7,54 կմ, Արագածոտնի մարզ՝ 12,993 կմ:

Ընդհանուր առմամբ 2024 թվականին իրականացվել են 122,6 կմ պետական նշանակության ավտոճանապարհների միջին նորոգման աշխատանքներ, որից 5,8 կմ՝ միջպետական, 116,8 կմ՝ հանրապետական նշանակության:

2024 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 5,088,982 ՀՀ դրամ, որը ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է, և ճշտված պլանը կազմել է 5,987,182,200 դրամ:

Փաստացի ծախսը կազմել է 5,611,113,628.8 դրամ, տարբերությունը՝ 376,068.6 հազ. դրամ, որից 2024 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ, անբարենպաստ եղանակային պայմաններից ելնելով, անավարտ մնացած և 2025 թվական տեղափոխված պայմանագրերի արժեքը կազմում է 316,566.2 հազ. դրամ, իսկ ավարտված և շահագործման ընդունված ճանապարհահատվածների վերաբերյալ պայմանագրերի 5%-ը կազմում է 59,502.4 հազ. դրամ:

2024 թվականի միջին նորոգման ծրագրերով իրականացված աշխատանքների համար պետական բյուջեից փաստացի ֆինանսավորման տոկոսը՝ ճշտված բյուջեի նկատմամբ, կազմում է 94%:

➢ **ՀՀ Շիրակի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

1. Հ-75, /Հ-62/-Իսահակյան-/Մ-7/(Գյումրի) կմ60+200-կմ67+330 և կմ70+800-կմ73+593 հատվածներ: Աշխատանքները կավարտվեն 2025 թվականին:

2. Հ-21, /Հ-75/-Հոռոմ-Արթիկ-Ալագյազ-/Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ8+777-կմ19+107 հատված: Աշխատանքներն ավարտված են:

➢ **ՀՀ Արագածոտնի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

1. Հ-4, Երևան-Եղվարդ-Արագյուղ-Հարթավան-/Մ3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ33+340-կմ40+516 հատված: Աշխատանքներն ավարտված են:

2. Մ-1, Երևան-Գյումրի-ՀՀ սահման (Բավրա) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ30+128-կմ35+945 հատված: Աշխատանքներն ավարտված են:

➢ **ՀՀ Տավուշի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

1. Հ-58, /Մ-4/Ոսկեպար-Նոյեմբերյան-/Մ-6/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ24+810-կմ29+000 հատված: Աշխատանքները կավարտվեն 2025 թվականին:

2. Հ-64, /Հ-36/(Բերդ)-Արծվաբերդ-Չինարի հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ16+400-կմ32+660 հատված Աշխատանքներն ավարտված են:

3. Հ-73, /Մ-4/-Պարզ լիճ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000+կմ2+873 հատված: Աշխատանքները կավարտվեն 2025 թվականին:

➢ **ՀՀ Գեղարքունիքի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

1. Հ-30, /Մ-4/-Ճամբարակ-/Հ-7/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ11+000-կմ18+540 հատված: Աշխատանքներն ավարտված են:

2. Հ-30, /Մ-4/-Ճամբարակ-/Հ-7/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ19+233-կմ32+000 հատված: Աշխատանքներն ավարտված են:

3. Հ-30, /Մ-4/-Ճամբարակ-/Հ-7/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ34+900-կմ41+158 հատված: Աշխատանքներն ավարտված են:

4. Հ-30, /Մ-4/-Ճամբարակ-/Հ-7/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ41+158-կմ55+200 հատված: Աշխատանքները կավարտվեն 2025 թվականին:

➢ **ՀՀ Լոռու մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

1. Հ-22, /Մ-6/-Դսեղ-/Հ-70// հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ7+540 հատված: Աշխատանքներն ավարտված են:

➢ **ՀՀ Կոտայքի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

1. Հ-1, Վ. Պտղնու տրանսպորտային հանգույց -Աբովյան-Ֆանտան-Ալափարս-Հ-5 հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ21+754-կմ31+270 հատվածի և Մ-4,

Չարենցավանի տրանսպորտային հանգույցի միջին նորոգում: Աշխատանքներն ավարտված են:

2. Հ-5, մոտեցում Աղվերանին կմ0+0006-կմ6+800 հատված: Աշխատանքներն ավարտված են:

3. Մ-4, Երևան-Սևան-Իջևան-ՀՀ սահման (աջ գոտի) մետաղական արգելափակոցի տեղադրում (640գծմ): Աշխատանքներն ավարտված են:

N	Օբյեկտի անվանումը	Երկար. /կմ/ 2024թ.
	Ճանապարհների միջին նորոգում, այդ թվում՝	**122.985**
	Միջպետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	
1	Մ-1, Երևան-Գյումրի- ՀՀ սահման (Բավրա) կմ30+128-կմ35+945 հատված	5.817
2	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-ՀՀ սահման (աջ գոտի) մետաղական արգելափակոցի տեղադրում (640գծմ)	
	Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	
1	Հ-73, /Մ-4/-Պարզ լիճ կմ0+000-կմ2+873 հատված	2.873
2	Հ-75, /Հ-62/-Իսահակյան-/Մ-7/(Գյումրի) կմ60+200-կմ67+330 և կմ70+800-կմ73+593 հատվածներ	9.923
3	Հ-30, /Մ-4/-Ճամբարակ-/Հ-7/ կմ41+158-կմ55+200 հատված	14.042
4	Հ-58, /Մ-4/-Ոսկեպար-Նոյեմբերյան -/Մ-6/ կմ24+810-կմ29+000 հատված	4.19
5	Հ-45, Հ-30 /Մ-4/-Ճամբարակ-/Հ-7/ կմ11+000-կմ18+540 հատված	7.540
6	Հ-22, /Մ-6/-Դսեղ-/Հ-70/ կմ0+000-կմ7+540 հատված	7.540
7	Հ-4, Երևան-Եղվարդ-Արագյուղ-Հարթավան-/Մ3/ կմ33+340-կմ40+516 հատված	7.176
8	Հ-1, Վ. Պտղնու տրանսպորտային հանգույց-Աբովյան-Ֆանտան -Ալափարս-Հ-5 կմ21+754-կմ31+270 հատված և Մ-4, Չարենցավանի տրանսպորտային հանգույց	11.469
9	Հ-21, /Հ-75/-Հոռոմ-Արթիկ -Ալագյազ-/Մ-3/ կմ8+777-կմ19+107 հատված	10.33
10	Հ-30, /Մ-4/ -Ճամբարակ -/Հ-7/ կմ19+233-կմ32+000 հատված	12.767
11	Հ-30, /Մ-4/ -Ճամբարակ -/Հ-7/ կմ34+ 900-կմ41+158 հատված	6.258
12	Հ-64, /Հ-36/(Բերդ)-Արծվաբերդ-Չինարի կմ16+400-կմ32+660 հատված	16.26
13	Հ-5, մոտեցում Աղվերանին կմ0+000-կմ6+800 հատված	6.8

3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀՃՄՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է ՄԻՋՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող խոշոր ենթակառուցվածքային ծրագիր է: Ծրագրի նպատակներն են՝ հարևան երկրների հետ հաղորդակցման դյուրինացումը, Կենտրոնական Ասիա և Եվրոպա ձգվող հաղորդակցության ուղիներով դեպի արտաքին շուկաներ ելքի հնարավորությունների ընդլայնումը, տնտեսության հիմնական ոլորտների զարգացումն ու արտահանման ընդլայնումը (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, զբոսաշրջություն), բնակչության ներքին շարժերի ակտիվացումը և այլն: Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այս ճանապարհի կառուցումը կապահովի Հայաստանի հարավային սահմանից դյուրին երթևեկությունը մինչև Վրաստանի սահման, ապա նաև՝ դեպի սևծովյան նավահանգիստներ, թույլ կտա իրականացնել բարձր չափանիշներին համապատասխանող բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ, զարգացման լուրջ հնարավորություններ կընձեռի Հայաստանի հարավից հյուսիս ընկած բոլոր բնակավայրերին:

ՀՀՃՄՆ ծրագիրն իրականացվում է տրանշերով, որոնցից յուրաքանչյուրն առանձին ծրագիր է և ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից:

- **Տրանշ-1.** Երևան-Աշտարակ և Երևան-Արտաշատ ճանապարհահատված (Ասիական զարգացման բանկի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացված ավարտված ծրագիր)
- **Տրանշ-2.** Աշտարակ-Թալին ճանապարհահատված (Ասիական զարգացման բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)
- **Տրանշ-3.** Թալին-Լանջիկ ճանապարհահատված (Ասիական զարգացման բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)
- **Տրանշ-3.** Լանջիկ-Գյումրի ճանապարհահատված (Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)

➢ **Տրանշ-4.** Քաջարան-Ագարակ ճանապարհահատված (Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)

➢ **Տրանշ-4.** Քաջարանի թունելի և մոտեցումների կառուցման ծրագիր (Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)

➢ **Տրանշ-4.** Սիսիան-Քաջարան 60կմ ճանապարհահատվածի կառուցման ծրագիր (ՎԶԵԲ-ի, ԵՆԲ-ի, ԱԶԲ-ի, Ֆրանսիայի կառավարության և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)

➢ **Տրանշ-4.** Արտաշատ-Սիսիան ճանապարհահատված (նոր նախաձեռնություն)

➢ **Տրանշ-5.** Գյումրու շրջանցիկ և Քեթի-Բավրա ճանապարհահատված (նոր նախաձեռնություն):

Բոլոր ծրագրերն իրականացվում են
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից:

3.1 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ - ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 2

Տրանշ 2-ի նպատակն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ունենալ հյուսիսից հարավ ձգվող արդյունավետ, անվտանգ և կայուն ճանապարհային միջանցք՝ կապելով Հայաստանի Հանրապետությունը միջազգային և տեղական մակարդակներով: Մասնավորապես, Աշտարակ-Թալին հատվածում նախատեսվում է կառուցել I տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 42 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված: Գոյություն ունեցող միակողմանի 2 երթևեկելի գոտուց բաղկացած Մ-1 մայրուղին վերակառուցվում է միջազգային չափանիշներին համապատասխան 4 երթևեկելի գոտուց բաղկացած երկկողմ ավտոմայրուղու:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքը՝

ա) ճանապարհահատվածի հարմարավետության ու անվտանգության բարձրացում,

բ) ապրանքաշրջանառության մեծացում,

գ) տրանսպորտային ծախսերի կրճատում,

դ) տարանցիկ տրանսպորտի ներգրավում,

ե) զբոսաշրջության զարգացում:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

Ծրագրի բյուջե՝ 210,000,000 ԱՄՆ դոլար, որից



170,000,000 ԱՄՆ դոլար վարկային միջոց

40,000,000 ԱՄՆ դոլար ՀՀ համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում ԱԶԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի փվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No. 2729-ARM, ստորագրված՝ 30.05.2011թ. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 01.04.2015թ.-01.10.2034թ.:

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ մասհանված գումարների նկատմամբ՝ LIBOR+0,60% - 0,30%, չմասհանված գումարների նկատմամբ՝ տարեկան 0,15% կոմիսիոն վճար (վարկային համաձայնագրի կնքման 60-րդ օրվանից հաշված):

Շինարարությունը նախատեսված է իրականացնել երկու հատվածներով՝ Ագարակի հնագիտական վայրը շրջանցող 8 կմ հատված (կմ29+600-կմ37+545) և 34 կմ անավարտ հատված (կմ37+545-կմ71+500):

Տրանշ 2, 8 կմ հատվածի կապալառուն «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ (Հայաստան) և «Դինեշչանդրա Ռ Ագրիվալ ինտրակում» (Հնդկաստան) համատեղ ձեռնարկությունն է:

Տրանշ 2, 34 կմ անավարտ հատվածի կապալառուն «Լեվանտինա Ինխեներիա ի Կոնստրուկսիոն» ՍՊԸ (Իսպանիա) և «Օբրաս Պուբլիկաս ի Ռեգադիոս» ԲԸ (Իսպանիա) համատեղ ձեռնարկությունն է:

Ծրագրի ինժեներ (տեխնիկական վերահսկող) հանդիսանում է «ԷՋԻՍ Ինթերնեյշնլ» (Ֆրանսիա) և «Կոքս Քընսալթինգ» (Գերմանիա) համատեղ ձեռնարկությունը:

8 կմ հատված

2022 թվականի հոկտեմբերին ընտրված Կապալառուի հետ կնքվել է շինարարական աշխատանքների պայմանագիր: 16.01.2023թ. տրվել է շինարարական աշխատանքների մեկնարկը, որից հետո սկսվել են բետոնե ենթակառուցվածքների արտադրման գործարանի և շինարարական ճամբարի կազմակերպման աշխատանքները: Հողերի օտարման գործընթացն ավարտված է: Ավարտվել են հաղորդակցուղիների տեղափոխման և հողային աշխատանքները: Ավարտվել են սևահողի շերտի հեռացման աշխատանքները: Ավարտվել են կմ36+000-կմ37+002 հատվածի 1 կմ երկարությամբ շրջանցիկ ճանապարհի կառուցման աշխատանքները, ինչի արդյունքում Մ-1 գործող ճանապարհի երթևեկությունը ժամանակավորապես տեղափոխվել է՝ գործող ճանապարհահատվածում նոր ճանապարհի լիցքի աշխատանքների իրականացման նպատակով: Իրականացված հանույթի ծավալը 1,241,158մ^3 է (100%), լիցքի ծավալը՝ 895,594մ^3 (100%): Բոլոր 31 արհեստական կառուցվածքները լրիվ կառուցված են: Իրականացված է բետոնացման աշխատանքների 100%-ը: Ագարակ-Ոսկեվազ ճանապարհային հանգույցի տարածքում բետոնացվել են փոխհատման կամուրջի հիմքերը, տեղադրվել են հեծանները, իրականացվել է թևի և կամուրջի ասֆալտապատումը, երթևեկությունը տեղափոխվել է հանգույցի կամրջի վրա: 2-րդ շերտով ասֆալտապատված է շուրջ 7.2 կմ ճանապարհահատված: Տեղադրվում են արգելափակոցները, մաքրվում են շեպերը, ավարտական փուլում է միջին հատվածի և կողային հատվածների ջրահեռացման համակարգերի տեղադրումը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի հունվարի 16-ին, պայմանագրային ավարտի ժամկետը նախատեսված էր 2024 թվականի հուլիսի 15-ին: 2024 թվականի հոկտեմբերի 31-ին Կապալառուին ներկայացվել է պայմանագրի ավարտի ժամկետից ուշացման համար տույժի առավելագույն գումարի պահանջ՝ 2,1 միլիոն դոլարի չափով: 2024 թվականի ընթացքում իրականացվել է աշխատանքների 53%-ը: 2024 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ Ծրագրի ֆիզիկական առաջընթացը շուրջ 90% է: Վերջին շերտի ասֆալտի տեղադրման, կահավորման, գծանշման, արգելափակոցների տեղադրման, շեպերի մշակման և այլ՝ ոչ հիմնական, աշխատանքների ավարտը կանխատեսվում է 2025 թվականի 2-րդ եռամսյակում՝ կախված ասֆալտապատման համար նորմատիվներով թույլատրելի եղանակային պայմաններից և ջերմաստիճանից:

34 կմ հատված (կմ37+545-կմ71+500)

2021թ. սկսվել են 34 կմ հատվածի (կմ37+54 -կմ71+500) նախագծի և նոր մրցութային փաստաթղթերի մշակման աշխատանքները, որոնք ավարտվել են 2022թ. հունվարի վերջին: Նախագիծն անցել է պարզ և համալիր փորձաքննությունները:

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՁԱԽ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ԳՈՏԻ՝ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՎ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ ԽՈՒՍԱՓԵԼ ԳՈՐԾՈՂ Մ1 ՃԱՆԱՊԱՐՀԻ ՈԼՈՐԱՆՆԵՐԻՑ և ԶԳԱԼԻՈՐԵՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ:

25.08.2022թ. հայտարարվել է շինաշխատանքների ձեռքբերման միջազգային մրցույթ, որի արդյունքում 03.10.2023թ. շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր է կնքվել «Լեվանտինա Ինխեներիա ի Կոնստրուկսիոն» ՍՊԸ և «Օբրաս Պուբլիկաս ի Ռեգադիոս» ԲԸ համատեղ ձեռնարկության հետ: Աշխատանքների մեկնարկը տրվել է 13.11.2023թ.:

Պատվիրատուի հանձնարարությամբ Ծրագրի շինարարական աշխատանքները մեկնարկել են Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի կմ59+980–կմ68+820 հատվածում: Նշված հատվածը միակողմանի կառուցվել և կահավորվել է անվտանգության համապատասխան տարրերով և 2023թ. դեկտեմբերի 15-ից բաց է երթևեկության համար:

Ավարտվել են նաև հիմնական ճանապարհի 34 կմ ձախ երթևեկելի գոտու երկշերտ ասֆալտապատման աշխատանքները և 2024 թվականի դեկտեմբերից երթևեկությունը տեղափոխվել է նորակառույց ճանապարհի ձախ երթևեկելի գոտի՝ հնարավորություն տալով մի շարք հատվածներում խուսափել գործող Մ-1 ճանապարհի ոլորաններից և զգալիորեն բարձրացնել երթևեկության անվտանգությունը:

Ծրագրի ընդհանուր ֆիզիկական առաջընթացը 2024 թվականի տարեվերջին կազմել է մոտ 55%, իսկ ֆինանսական առաջընթացը՝ շուրջ 50%:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչներ, ենթածրագրերը և կատեգորիաներ*	2024թ. ընթացքում կատարված աշխատանքները			2024թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները		
		Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում	
			Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
1	2	7	8	9	11	12	13
	Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2, այդ թվում՝	34,141,781.37	28,068,230.23	6,073,551.14	31,219,698.29	25,464,580.62	5,755,117.67
ա)	շինարարական աշխատանքներ	32,419,917.40	27,016,597.83	5,403,319.57	29,119,881.47	24,073,100.46	5,046,781.01
բ)	խորհրդատվական ծառայություններ	1,240,677.90	1,051,632.40	189,045.50	1,618,630.75	1,391,480.16	227,150.59
գ)	Տոկոսագումար և պարտավորագին	0	0	0	0	0	0
դ)	դրամաշնորհներ ՀՕՏԾ-ի գծով	481,186.08		481,186.08	481,186.08		481,186.08

Ծրագրի ֆինանսական հոսքերի գրաֆիկն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2024թ.



3.2 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 3

Տրանշ 3-ի նպատակն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ունենալ հյուսիսից հարավ ձգվող արդյունավետ, անվտանգ և կայուն ճանապարհային միջանցք՝ կապելով Հայաստանի Հանրապետությունը միջազգային և տեղական մակարդակներով: Մասնավորապես, Տրանշ 3-ի շրջանակներում նախատեսվում է Թալին և Լանջիկ քաղաքների միջև գտնվող մոտ 18,7 կմ երկարությամբ Թալին-Լանջիկ երկուղի ճանապարհային հատվածի վերակառուցում և այդ հատվածի ընդլայնում՝ վերածելով այն երկկողմանի երթևեկությամբ քառուղի մայրուղու:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում՝

ա) կդյուրինացվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհները,

բ) կմեծանա առևտրի շրջանառությունը, մրցակցությունը,

գ) կնվազեն փոխադրումների ծախսերը,

դ) կմեծանա շուկաների, աշխատատեղերի, սոցիալական ծառայությունների հասանելիությունը,

ե) կբարելավվի կառավարումը:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

Ծրագրի բյուջե՝ 132,406,091 ԱՄՆ դոլար, որից



100,000,000 ԱՄՆ դոլար վարկային միջոց

32,406,091 ԱՄՆ դոլար ՀՀ համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում ԱԶԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի փվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No.2993-ARM, ստորագրված՝ 11.03.2014թ. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 27 տարի (7 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ մասհանված գումարների նկատմամբ՝ LIBOR+0,60% - 0,20%, չմասհանված գումարների նկատմամբ՝ 0,20% կոմիսիոն վճար, չմասհանված գումարների նկատմամբ՝ տարեկան 0,15% կոմիսիոն վճար:

Ծրագրի հիմնական կապալառուն չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերությունն է, որի հետ 2016 թվականի մայիսի 25-ին ստորագրվել է No T3-CW-01 (Մ-1 Թալինից Գյումրի ճանապարհի կմ71+500-կմ90+200 (Թալին-Լանջիկ հատված) վերակառուցում և բարելավում) պայմանագիրը:

Ծրագրի խորհրդատուն (տեխնիկական վերահսկողը) իտալական «Այ-Ար-Դի Ինժեներինգ Ս.ր.Լ» ընկերությունն է (Ծրագրի ինժեներ):



Ծրագրի ընթացիկ վիճակը

2022 ԹՎԱԿԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑԵԼ Է ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԵՎ ՈՐՈՇԻՉ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ, ՈՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՄԲՈՂՋ ԹԱՓՈՎ ԸՆԹԱՑԵԼ ԵՎ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, 2022Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԲԱՑՎԵԼ Է ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ:

Թերությունների վերացման շրջանում Կապալառուն պարտավորվել է իրականացնել մնացորդային աշխատանքները և շտկել Ինժեների կողմից արձանագրված թերությունները: 2024 թվականի նոյեմբերի 25-ի դրությամբ մնացորդային աշխատանքներն ավարտվել են: Ինժեների կողմից նախաձեռնվել է Կատարման վկայագրի (Performance Certificate) թողարկման գործընթացը:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N N	Բաղադրիչի անվանումը	2024թ. ընթացքում կատարված աշխատանքները, ԱՄՆ դոլար			2024թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, ԱՄՆ դոլար		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3, Վարկ 2993-ARM, այդ թվում՝	19,488,389.28	16,188,392.21	3,299,997.07	19,464,785.28	16,169,633.80	3,295,151.48
1	Շինարարական աշխատանքներ	18,367,276.56	15,160,251.62	3,207,0274.74	18,464,366.92	15,243,074.40	3,221,292.52
2	Խորհրդատվություն և նախագծում	506,434.51	423,523.00	82,911.51	379,900.62	316,800.57	63,100.05
3	Ծրագրի կառավարման աջակցություն	614,678.21	604,617.39	10,060.82	620,517.75	609,758.83	10,758.92

Ծրագրի ֆինանսական հոսքերի գրաֆիկն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2024թ.



3.3 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ - ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 3

ԵՆԲ Տրանշ 3-ի նպատակն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ունենալ հյուսիսից հարավ ձգվող արդյունավետ, անվտանգ և կայուն ճանապարհային միջանցք՝ կապելով Հայաստանի Հարնապետությունը միջազգային և տեղական մակարդակներով: Մասնավորապես, ԵՆԲ Տրանշ 3-ի շրջանակներում նախատեսվում է Մ-1 միջպետական Թալինից Գյումրի ճանապարհի Լանջիկ և Գյումրի քաղաքների միջև գտնվող մոտ 27.47կմ երկարությամբ երկուղի ճանապարհահատվածի վերակառուցում և բարելավում՝ վերածելով այն երկկողմանի երթևեկությամբ քառուղի մայրուղու:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում՝

ա) կդյուրինացվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհները,

բ) կմեծանա առևտրի շրջանառությունը, մրցակցությունը,

գ) կնվազեն փոխադրումների ծախսերը,

դ) կմեծանա շուկաների, աշխատատեղերի, սոցիալական ծառայությունների հասանելիությունը,

ե) կբարելավվի կառավարումը:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

Ծրագրի բյուջե՝ 79,845,934 եվրո, որից



60,000,000 եվրո վարկային միջոց
6,000,000 եվրո դրամաշնորհ
13,845,934 եվրո ՀՀ համաֆինանսավորում

Ծրագիրն ունեցել է նաև տեխնիկական աջակցության մաս՝ 6,000,000 եվրո արժողությամբ դրամաշնորհ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում ԵՆԲ-ի վարկային միջոցներից, ԵՆԲ-ի միջոցով Եվրոպական Միության Հարևանության ներդրումային գործիքի շրջանակներում տրամադրված դրամաշորհային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի տվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No. FI82.634, ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև՝ 07.11.2013 թվականին Երևանում և 18.11.2013 թվականին Լյուքսեմբուրգում:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 30 տարի:

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ հաստատագրված կամ լողացող, ամրագրվելու է առանձին՝ յուրաքանչյուր տրանշի համար: Լողացող տոկոսադրույքը հավասար է 6-ամսյա EURIBOR գումարած 0,623% մարժա:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԱԼԱՌՈՒՆ չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերությունն է, որի հետ 2015 թվականի դեկտեմբերի 8-ին ստորագրվել է No T3-CW-02 (Մ-1 Թալինից Գյումրի ճանապարհի կմ90+200-կմ117+670 հատվածի (Լանջիկ-Գյումրի հատվածի) վերակառուցում և բարելավում) պայմանագիրը:

ԾՐԱԳՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ (տեխնիկական վերահսկողը) իտալական «Այ-Ար-Դի Ինժեներինգ Ս.ր.Լ» ընկերությունն է (Ծրագրի ինժեներ):

Ծրագրի ընթացիկ վիճակը

Պայմանագիրը կնքվել է 08.12.2015թ.՝ 74.066.179,92 եվրո ընդհանուր արժողությամբ: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 20.06.2016թ. /1096 օր կատարման ժամկետով, մինչև 21.06.2019թ/:

Ավարտման ժամկետը վիճարկվել է Կապալառուի կողմից Միանձնյա վեճերի խորհրդում, որի որոշման համաձայն Աշխատանքների Ավարտման ժամկետը երկարաձգվել է մինչև 17.06.2024թ:

Հիմնական ավտոճանապարհի ասֆալտապատման աշխատանքներն ավարտված են ամբողջությամբ:

Ինժեների կողմից ճանապարհի հանձնման-ընդունման գործընթացը և ճանապարհահատվածի վերջնական բացումը կիրականացվեն համաձայն պայմանագրի՝ կապալառուի կողմից բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո:

Աշխատանքների ավարտի իրատեսական ժամկետը՝ 2025 թվականի 3-րդ եռամսյակ:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Վարկային ծրագիր

NN	Բաղադրիչի անվանումը	2024թ. ընթացքում կատարված աշխատանքները, եվրո			2024թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3, այդ թվում՝	**13,246,241.65**	**10,881,857.68**	**2,364,383.97**	**3,819,906.09**	**1,740,301.06**	**2,079,605.03**
1	Շինարարական աշխատանքներ	11,927,706.74	9,773,584.72	2,154,122.02	2,840,984.43	970,767.73	1,870,216.70

2	Խորհրդատվություն և նախագծում	1,317,733.78	1,108,272.97	209,460.81	978,120.53	769,533.33	208,587.20

Դրամաշնորհային ծրագիր*

NN	Բաղադրիչի անվանումը	2024թ. ընթացքում կատարված աշխատանքները, եվրո			2024թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3, այդ թվում՝	**1,535,622.17**	**1,380,370.00**	**155,252.17**	**1,535,622.17**	**1,380,370.00**	**155,252.17**
1	Շինարարական աշխատանքներ	1,535,622.17	1,380,370.00	155,252.17	1,535,622.17	1,380,370.00	155,252.17
2	Խորհրդատվություն և նախագծում**	0	0	0	0	0	0

Ծրագրի ֆինանսական հոսքերի գրաֆիկն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2024թ. (մլն եվրո)



3.4 ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4 ՔԱՋԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾ

Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է Քաջարան-Ագարակ շուրջ 32 կմ ընդհանուր երկարությամբ II տեխնիկական կարգի (80 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) ճանապարհահատվածի վերակառուցումը:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքը՝

ա) Քաջարան-Ագարակ հատվածում II տեխնիկական կարգի ճանապարհի կառուցում,

բ) տրանսպորտային միջոցների ներկայիս 50 կմ/ժ միջին արագության ավելացում մինչև 80 կմ/ժ,

գ) ուղևորության ժամանակի կրճատում մոտ 35-40 րոպեով,

գ) ապրանքաշրջանառության մեծացում,

դ) տարանցիկ տրանսպորտի ներգրավում,

ե) զբոսաշրջության զարգացում:

Նոր երթուղու ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 32 կմ: Ծրագիրը ներառում է 5 նոր տրանսպորտային հանգույցների, 6 նոր վերգետնյա անցումների, մոտ 920 մետր ընդհանուր երկարությամբ 2 նոր թունելների և 17 նոր կամուրջների կառուցում: Կառուցվելուց հետո ճանապարհի նշված հատվածը կհամապատասխանի միջազգային առաջադեմ չափանիշներին՝ ճանապարհային անվտանգության, հարմարավետության և ուղևորության ժամանակի կրճատման առումով:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

Ծրագրի բյուջե՝ 236,681,000 ԱՄՆ դոլար (առանց հարկերի), որից



150,000,000 ԱՄՆ դոլար վարկային միջոց

86,681,000 ԱՄՆ դոլար ՀՀ համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում Եվրասիական զարգացման բանկի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի տվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ Եվրասիական զարգացման բանկից Հյուսիս-հարավ ավտոճանապարհային միջանցքի շինարարության (Տրանշ 4) համար ներդրումային վարկի տրամադրման համաձայնագիր, ստորագրված 14.04.2015 թվականին Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև: 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրվել է թիվ 4 լրացուցիչ համաձայնագիրը՝ համաձայն որի՝ ծրագրի բյուջեն, առանց ՀՀ օրենսդրությամբ պահանջվող հարկերի, կազմում է 236,681,000 ԱՄՆ դոլար:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 30.06.2020 թվականից 30.12.2034 թվականը:

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ տարեկան 1,65%:

Ծրագրի ընթացիկ վիճակը



2023 թվականին իրականացվել է Կապալառու ընկերության ընտրության գործընթացը: Արդյունքում հաղթող է ճանաչվել իրանական «Abad Rahan Pars International Group» և «Tunnel Sadd Ariana» («Աբատ Ռահան Պարս Ինթերնեյշնլ Գրուպ» և «Թունել Սադ Արիանա») համատեղ ձեռնարկությունը: 2023 թվականի հոկտեմբերի 23-ին ստորագրվել է համապատասխան կապալի պայմանագիր: Պայմանագրի արժեքը կազմում է 214,4 մլն ԱՄՆ դոլար (այդ թվում՝ հարկերը):

2023 թվականին իրականացվել է նաև տեխնիկական հսկողության ընկերության ընտրության գործընթացը: Արդյունքում հաղթող է ճանաչվել խորվաթական «IGH ինստիտուտ» կազմակերպությունը: 2023 թվականի նոյեմբերի 14-ին ստորագրվել է համապատասխան պայմանագիր: Պայմանագրի արժեքը կազմում է 1,7 մլն ԱՄՆ դոլար և 1,7 մլրդ ՀՀ դրամ (առանց հարկերի):

Հիմնական շինարարական աշխատանքները սկսվել են 2024 թվականի մայիսի վերջին: Կապալառուն կենտրոնացել է հողային աշխատանքների իրականացման, ինչպես նաև 1-ին թունելի (երկարությունը շուրջ 390 մ) և Մեղրու տրանսպորտային հանգույցի կառուցման վրա: Աշխատանքներում ընդգրկված են շուրջ 270 աշխատակից և 174 միավոր տեխնիկա: 2024 թվականին Կապալառուի օրական միջին կատարողականը կազմել է շուրջ 35-42 մլն ՀՀ դրամ:

2024 թվականին ծրագրի փաստացի իրականացումը կազմել է ՀՀ պետական բյուջեով նախատեսվածի շուրջ 97.5%-ը:



2024 թվականին կապալառուն փաստացի իրականացրել է՝

1) շուրջ 1.1 մլն խորանարդ մետր հողային աշխատանքներ,

2) 390 մետր երկարությամբ առաջին թունելի մոտ 30 մետր փորման աշխատանքներ,

3) Մեղրու տրանսպորտային հանգույցի հողային աշխատանքներ,

4) սկսվել են նաև Մեղրու տրանսպորտային հանգույցի Էստակադայի կառուցման աշխատանքները,

5) շուրջ 95 մետր ընդհանուր երկարությամբ հենապատերի կառուցման աշխատանքներ,

6) 67 մետր ընդհանուր երկարությամբ կամրջի հիմքերի կառուցման աշխատանքներ:

Շինարարությունը նախատեսվում է ավարտել 2027 թվականին, որից հետո կսկսվի թերությունների համար պատասխանատվության ժամկետը (2 տարի):

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2024թ. ընթացքում կատարված աշխատանքները, ԱՄՆ դոլար			2024թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, ԱՄՆ դոլար		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս - Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 4, այդ թվում՝	**31,778,256.01**	**17,701,464.16**	**14,076,791.85**	**28,016,622.09**	**14,435,155.98**	**13,581,466.11**
1	ա) շինարարական աշխատանքներ	19,761,938.79	16,468,282.32	3,293,656.47	16,204,360.69	13,410,906.16	2,793,454.53
2	բ)խորհրդատվություն և նախագծում	999,572.97	817,754.24	181,818.73	829,805.30	626,781.81	203,023.49
3	գ) հողերի օտարում և վերաբնակեցում	10,341,897.29	0.00	10,341,897.29	10,341,897.30	0.00	10,341,897.30
4	դ) պահպանման ծախսեր	671,011.68	412,231.54	258,780.14	636,940.32	394,486.30	242,454.02
5	ե) չհատկացված /ապրանքներ/	3,835.28	3,196.06	639.21	3,618.48	2,981.71	636.77

3.5 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4

ՔԱՋԱՐԱՆԻ ԹՈՒՆԵԼԻ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Քաջարանի թունելի (երկարությունը շուրջ 7.0 կմ) կառուցման և գոյություն ունեցող Մ-2, Երևան-Երասխ-Նորավան-Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ Սահման շուրջ 4 կմ (Քաջարանի թունելի մուտք - Սիսիան-Քաջարան նախատեսվող նոր ճանապարհահատվածի խաչմերուկ) երկարությամբ հատվածի վերակառուցման աշխատանքները: Նախատեսված շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկված ժամկետը կազմում է շուրջ 6 տարի Ծրագրի իրականացման արդյունքում գործող երթուղին կկրճատվի շուրջ 14 կմ-ով, տրանսպորտային միջոցների միջին արագությունը 50 կմ/ժ-ից կհասնի 80 կմ/ժ-ի, մոտ 40 րոպեով կկրճատվի Հյուսիս-հարավ ճանապարհային միջնացքի ներդրումային ծրագրի Քաջարան-Ագարակ ճանապարհային հատվածի ուղևորության ժամանակը, կնվազի Մեղրու լեռնանցքի օգտագործումը, հնարավորություն կստեղծվի խուսափել ձմռանը լեռնանցքի անցանելիության դժվարություններից, զգալիորեն կբարձրանա ճանապարհային անվտանգության մակարդակը, կավելանա ապրանքաշրջանառությունը:

Ծրագրի իրականացման համար 2024 թվականի հուլիսի 26-ին Հայաստանի Հանրապետության և Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջև կնքվել է ներդրումային վարկային համաձայնագիր:

Ծրագրի արժեքը (առանց ՀՀ օրենսդրությամբ պահանջվող հարկերի) կազմում է 329 մլն ԱՄՆ դոլար (200 մլն ԱՄՆ դոլար՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ և 129 մլն ԱՄՆ դոլար՝ ՀՀ համաֆինանսավորում):

Ըստ կնքված ներդրումային վարկային համաձայնագրի՝

1) Ներդրումային վարկի հասանելիության ժամկետի ավարտ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 108 ամիս,

2) Ներդրումային վարկի ժամկետ՝ ուժի մեջ մտնելու օրվանից 20 տարի, ներառյալ այն ժամանակահատվածը (5 տարի), որի ընթացքում չի կատարվում հիմնական պարտքի մարում,

3) Տոկոսներ՝ տարեկան 4%,

4) Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից՝

- Բաղադրիչ 1. Ինժեներական և շինարարական աշխատանքներ. թունելի կառուցում և Մ-2 ճանապարհի հատվածի վերակառուցում, ինչպես նաև աշխատանքների կատարման համար ինժեներական և վերահսկողական ծառայություններ,
- Բաղադրիչ 2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում՝ երկու ենթաբաղադրիչների իրականացման միջոցով (Ենթաբաղադրիչ 2.1՝ ճանապարհային թունելների սպասարկման մոնիթորինգի համակարգի մշակում և Ենթաբաղադրիչ 2.2՝ ճանապարհային թունելների սպասարկման մոնիթորինգի համակարգի համար սարքավորումների ձեռքբերում և համակարգի ներդրում),
- Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում:

Ծրագրի ընթացիկ վիճակը

Հայտարարվել է միջազգային մրցույթ՝ տեխնիկական հսկողության խորհրդատու ընտրելու համար: 18 միջազգային ընկերություններ ներկայացրել են հետաքրքրության նամակներ: 2024 թվականի ընթացքում աշխատանքներ են տարվել ընկերություններին գնահատելու և «կարճ ցուցակի» կազմելու ուղղությամբ: Ընկերությունների գնահատման և «կարճ ցուցակի» կազմման գործընթացն ավարտված է: Համապատասխան հաշվետվությունը

ներկայացվել է Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի և ծրագրի Կառավարման խորհրդի հաստատմանը:

Կազմվել են նաև կապալառուի ընտրության մրցութային փաստաթղթերը, որոնք աշխատանքային կարգով համաձայնեցվել են Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հետ: Մրցութային փաստաթղթերը ներկայացվել են Ծրագրի կառավարման խորհրդի հաստատմանը: Խորհրդի կողմից հանձնարարական է տրվել՝ մրցութային գործընթացը հուսալի ձևով կազմակերպելու համար ներգրավել համապատասխան միջազգային փորձագետ և ստանալ մասնագիտական եզրակացություն՝ հիմնվելով նմանատիպ ծրագրերի իրականացման միջազգային լավագույն փորձի վրա: Համապատասխան պայմանագիրը ստորագրվել է, որի արդյունքում միջազգային փորձագետի կողմից իրականացվել են մրցութային փաստաթղթերի մասնագիտական ուսումնասիրության աշխատանքներ: Ծրագրի կառավարման խորհրդի կողմից կապալառուի ընտրության մրցութային փաստաթղթերը հաստատվել և ներկայացվել են Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի վերջնական հաստատմանը: Կապալառուի ընտրության մրցույթը նախատեսվում է հայտարարել 2025 թվականի մարտ-ապրիլի ամիսներին:





3.6 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4

ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ 60ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Այս Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել Սիսիան-Քաջարան շուրջ 60 կմ նոր ճանապարհահատված (ներառյալ Բարգուշատի թունելը), որը թույլ կտա կրճատել Սիսիան-Քաջարան ճանապարհային հատվածի երկարությունը շուրջ 58 կմ-ով, ինչի արդյունքում կնվազի երթևեկության տևողությունը, տրանսպորտային միջոցների ներկայիս 50 կմ/ժ միջին արագությունը կավելանա մինչև 100 կմ/ժ: Միևնույն ժամանակ կբարձրանան երթևեկության հարմարավետությունն ու անվտանգությունը: Ճանապարհահատվածի կառուցումը կնպաստի նաև ապրանքաշրջանառության (Մեղրիի անցակետով անցնում է ապրանքաշրջանառության ծավալի շուրջ 39,1%-ը) մեծացմանը, տրանսպորտային ծախսերի կրճատմանը, տարանցիկ տրանսպորտի ներգրավմանը և տուրիզմի զարգացմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում կանխատեսվում է նաև տրանսպորտային հոսքերի զգալի ավելացում: Հաշվարկված է, որ առկա շուրջ 4850 մեքենա/օր ցուցանիշի համեմատ 2052 թվականին տրանսպորտային հոսքերը կավելանան շուրջ 2 անգամ:

Ծրագիրը 2024 թվականին Լոնդոնում արժանացել է «Project Finance Awards» մրցանակին՝ որպես 2023 թվականի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի լավագույն ճանապարհային ծրագիր: Նշված մրցանակը շնորհվել է աշխարհահռչակ «Emeafinance» ամսագրի կողմից:

Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության համար ներդնել Խելացի տրանսպորտային համակարգի ռազմավարություն (Intelligent Transport System Strategy), որը կբարելավի ճանապարհների շահագործման և տնտեսական ցուցանիշները:

Ծրագրի շրջանակներում կիրառվելու են բնապահպանական և սոցիալական ազդեցությունների, կլիմայի փոփոխության վրա ազդեցության մեղմացման մեխանիզմներ, ԵՄ հրահանգ (EU Directive) 2008/96/EC-ի համաձայն՝ ճանապարհային անվտանգության պահանջներ, որոնք սահմանված են ՎԶԵԲ քաղաքականությունով:

Ներդրումային ծրագրի ընդհանուր գնահատված արժեքը կկազմի շուրջ 572.07 մլրդ ՀՀ դրամ (կամ շուրջ 1.34 մլրդ եվրո):

Աշխատանքային մանրամասն նախագիծը մշակվել է 2018 թվականին: Նախագծի համաձայն՝ նախատեսվում է կառուցել II կարգի նոր ճանապարհ՝ I կարգի ճանապարհի պահանջներին համապատասխանող պարամետրերով: Ճանապարհի ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 60 կմ, ներառյալ՝

- 27 կամուրջ՝ 4,7 կմ ընդհանուր երկարությամբ,
- 12,5 կմ ընդհանուր երկարությամբ 9 թունել, ներառյալ ամենամեծ՝ մոտ 8,6 կմ երկարությամբ Բարգուշատի թունելը:

Ծրագիրը բաժանված է երեք հիմնական մասի՝

- 27 կմ երկարությամբ Հյուսիսային հատվածը, որը նախատեսվում է կառուցել ԱԶԲ և ԵՆԲ ֆինանսական միջոցների ներգրավմամբ, ինչպես նաև ՀՀ համաֆինանսավորմամբ,
- 8,6 կմ երկարությամբ Բարգուշատի թունելը, որն նախատեսվում է կառուցել Ֆրանսիայի կառավարության աջակցությամբ,
- 24,2 կմ երկարությամբ Հարավային հատվածը, որը նախատեսվում է կառուցել ՎԶԵԲ և ԵՆԲ ֆինանսական միջոցների ներգրավմամբ, ինչպես նաև ՀՀ համաֆինանսավորմամբ:



Ծրագրի ընթացիկ վիճակը

1. 2024 թվականի մայիսի 15-ին ՎԶԵԲ-ի հետ կնքվել է համապատասխան ֆինանսավորման վարկային համաձայնագիր (236 մլն եվրո):

Ըստ կնքված ներդրումային վարկային համաձայնագրի՝

i.Հարավային ենթահատվածի ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից, որոնք իրականացվելու են ՎԶԵԲ գնումների քաղաքականությամբ՝

- Սիսիան-Քաջարան ճանապարհի հարավային հատվածի կառուցում (Նախագծման փուլ),
- Սիսիան-Քաջարան ճանապարհի հարավային հատվածի կառուցում (Շինարարության փուլ),
- Ինժեներական վերահսկողություն,
- Ծրագրի կառավարման խորհրդատու,
- Ճանապարհային ոլորտի քաղաքականության մշակում,
- ITS համակարգ (Խելացի տրանսպորտային համակարգի ռազմավարություն):

ii.236 մլն եվրոն նախատեսվում է ներգրավել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (ՎԶԵԲ), իսկ 137 մլն եվրոն՝ Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ),

iii.Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորումը կկազմի շուրջ 78.17 մլն եվրո, որից ԱԱՀ՝ 74.67 մլն եվրո և 3.05 մլն եվրո այլ ծախսեր (Հողերի օտարում և տարաբնակեցում, գործառնական ծախսեր, բնապահպանական և սոցիալական ազդեցությունների արտաքին մոնիթորինգ, տարեկան ֆինանսական աուդիտ, ճանապարհային անվտանգության աուդիտ),

iv.Վարկի արժույթ՝ եվրո,

v.Վարկի տոկոսադրույքի տեսակ՝ լողացող,

vi.Վարկի տարեկան տոկոսադրույք՝ 6-ամսյա Euribor + 1% մարժա,

vii.Պարտավորության վճարի դրույքաչափ՝ տարեկան 0.5%, որը հաշվարկվում է վարկի չմասհանված գումարի նկատմամբ՝ սկսած Վարկային համաձայնագրի ստորագրմանը հաջորդող 60-րդ օրվանից,

viii.Վարկի մարման ժամկետ՝ 20 տարի, որից արտոնյալը՝ 5 տարի. վարկի մայր գումարի մարումները փոխկապված են վարկի ամբողջ գումարին և իրականացվելու են 30 հավասարաչափ վճարումներով:

2. 2024 թվականի նոյեմբերի 12-ին ԵՆԲ-ի հետ է կնքվել համապատասխան ֆինանսավորման վարկային համաձայնագիր (236 մլն եվրո):



Ըստ կնքված ներդրումային վարկային համաձայնագրի՝

i.Վարկի արժույթ՝ եվրո,

ii.Բանկը վարկը կբաշխի մինչև 20 տրանշով: Յուրաքանչյուր տրանշի գումարը պետք է լինի առնվազն 5 միլիոն եվրո:

3. ԱԶԲ-ի հետ համապատասխան ֆինանսավորման վարկային համաձայնագիր (236 մլն եվրո) նախատեսվում է ստորագրել 2025 թվականի մարտին:

4. Բարգուշատի թունելի հատվածի ֆինանսավորման հարցով ՀՀ ֆինանսների նախարարությունը պաշտոնական նամակով դիմել է Ֆրանսիայի ֆինանսների նախարարությանը: Ֆինանսավորման հարցը քննարկման փուլում է: 2024 թվականին ֆրանսիական կողմի հետ քննարկվել են կապալառու ընկերության և տեխնիկական հսկողության խորհրդատուի գնումների ռազմավարությունը: Ֆրանսիական կողմին է տրամադրվել նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը՝ այն ֆրանսիական կողմից առաջարկված հնարավոր պոտենցիալ կապալառուների հետ քննարկելու և իրենց կողմից ծրագրին մասնակցության հետաքրքրվածությունը հաստատելու նպատակով:

5. Բոլոր երեք հատվածների շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2025 թվականի վերջին 2026 թվականի սկզբին:

6. Բոլոր երեք հատվածների շինարարության տևողությունը գնահատվում է մոտ 6 տարի: Շինարարության ավարտից հետո կսկսվի 2 տարվա երաշխիքային ժամկետ՝ հնարավոր թերությունների վերացման համար:

7. ՎՋԵԲ-ի կողմից վարձված գնումների խորհրդատուի աջակցությամբ 2024 թվականին շարունակվել են Հարավային հատվածի համար շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաստաթղթերի (նախագծում/շինարարություն», Fidic Yellow Book պայմանագրի մոդելով) և տեխնիկական հսկողության խորհրդատուի առաջադրանքի և մրցութային փաթեթի մշակման աշխատանքները:

8. Հաշվի առնելով Ծրագրի բարդությունը և երեք հատվածների փոխկապակցված լինելը՝ դոնոր կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանն առաջարկվել է Ծրագրի կառավարման նպատակով ներգրավել միջազգային ծրագրի կառավարման մասնագիտացված խորհրդատու ընկերություն (ԾԿԽ), որը կաջակցի Ծրագրի սահուն և պրոֆեսիոնալ իրականացմանը: ԾԿԽ ներգրավումը հնարավորություն կտա կառավարել ռիսկերը, արագ և արդյունավետ լուծումներ տալ ի հայտ եկող խնդիրներին, բարձրացնել հաշվետվողականությունը, ներդնել խոշոր ծրագրերի կառավարման ստանդարտներ, աջակցել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարողությունների հզորացմանը՝ նման միջազգային խոշոր ծրագրեր իրականացնելու համար: Սիսիան-Քաջարան ճանապարհի Ծրագրի Կառավարման խորհրդատուի խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցութային գործընթացի համար «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից 2025 թվականին նախատեսվում է հայտարարել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման միջազգային բաց ընթացակարգ: Այդ նպատակով 2024 թվականին «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից մշակվել է ԾԿԽ-ի պարտականությունների շրջանակ, որով սահմանվել են հետևյալ հիմնական գործառույթները՝

- Սիսիան-Քաջարան ճանապարհի ներդրումային ծրագրի բոլոր հատվածներում և բոլոր փուլերում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին խորհրդատվական մասնագիտական աջակցության ցուցաբերում,
- «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի վերահսկողության ներքո և վերջինիս հետ համատեղ Ծրագրի իրականացման ամբողջական կառավարում՝ Խորհրդատու կազմակերպության բոլոր գործողությունները նախապես համաձայնեցնելով «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հետ,

- «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին և Վարկատու կազմակերպություններին հետևողական հաշվետվողականության ապահովում: Հաշվի առնելով ներկայացված բոլոր հաշվետվությունները և տեղեկատվությունը՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին առաջարկությունների ներկայացում և խորհրդատվություն՝ հետագա անհրաժեշտ գործողությունների և ծրագրի առաջընթացի վերաբերյալ,
- Պայմանագրային պայմանների և պարտավորությունների կատարման վերահսկողություն և մոնիթորինգ, այդ թվում՝ վճարման պայմանների, փոփոխությունների, վեճերի լուծման մոնիթորինգի իրականացում: Միջանկյալ վճարման վկայագրերի (ՄՎՎ) վերահսկում և գրաֆիկների պատրաստում, պատրաստված ՄՎՎ-ների, գրաֆիկները և այլ տեխնիկական փաստաթղթերի վերանայում՝ խորհրդակցելով կապալառուների և ինժեներների հետ,
- Ծրագրի իրականացման ընթացքի վերահսկողություն և համապատասխան հաշվետվությունների ներկայացում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին, ինչպես նաև հավաստում առ այն, որ ծրագիրն իրականացվում է Վարկային համաձայնագրերի, դրանցում ներառված սոցիալական և բնապահպանական բոլոր պահանջներին համաձայն,
- Ռիսկերի կառավարումը նույնպես Ծրագրի կառավարման խորհրդատու կազմակերպության գլխավոր գործառույթներից է, որն ընդգրկում է ամբողջ ծրագրի շրջանակներում պայմանագրային ռիսկերի կառավարման մի շարք գործընթացներ, որոնք բացահայտում, վերլուծում և ակտիվորեն կառավարում են յուրաքանչյուր կոնկրետ շինարարական պայմանագրի շրջանակներում: Այս առաջադրանքը պետք է կատարվի Ծրագրի կառավարման խորհրդատուի կողմից՝ միջազգային լավագույն փորձին և լավագույն չափանիշներին համապատասխան:

3.7 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4

ԱՐՏԱՇԱՏ-ՍԻՍԻԱՆ ՇՈՒՐՋ 162 ԿՄ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԱԻՆ ԾՐԱԳԻՐ



Նախնական նախագիծը պատրաստ է:

Նախնական նախագծով նախատեսվում է վերակառուցել II տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 162 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված, այդ թվում՝ 14 կմ ընդհանուր երկարությամբ կամուրջներ և 12.4 կմ ընդհանուր երկարությամբ թունելներ:

Ֆինանսավորման խնդիրը դեռ լուծված չէ:

2023 թվականին մեկնարկել են մանրամասն նախագծման պարտականությունների շրջանակի մշակման աշխատանքները: Նշված պարտականությունների շրջանակը պատրաստ է, և համապատասխան ֆինանսավորման պարագայում կհայտարարվի մանրամասն նախագծման միջազգային մրցույթ:

3.8 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 5
ԳՅՈՒՄՐՈՒ ՇՐՋԱՆՑԻԿ ԵՎ ՔԵԹԻ-ԲԱՎՐԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾ

Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է Գյումրու շրջանցիկ ճանապարհի (23.2կմ) և Քեթի-Բավրա ճանապարհահատվածի (37.3կմ) վերակառուցումը:

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 5-ի նախագծումն իրականացրել է իտալական «Լոթթի Ինժեներիա» ԲԸ և «Էյ Այ Սի Փրոջեթի» ԲԸ համատեղ գործող ընկերությունը:

Նախագծային աշխատանքներն իրականացվել են հետևյալ հատվածներով՝

Գյումրու շրջանցիկ ճանապարհահատված

Նախատեսվում է կառուցել երկրորդ տեխնիկական կարգի նոր ճանապարհ՝ մոտ 23 կմ ընդհանուր երկարությամբ, 100 կմ/ժ հաշվարկային արագությամբ և երկու երթևեկելի գոտիով: Համաձայն նախագծի՝ կառուցվելու է 6 կամուրջ, 4 հանգույց:

2018 թվականին կազմված նախահաշվով շինարարական աշխատանքների արժեքը կկազմի շուրջ 49 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Կառավարման և խորհրդատվական ծախսերը կկազմեն մոտ 7 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ընդհանուր ծախսը կկազմի 56 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Քեթի-Բավրա ճանապարհահատված

Նախատեսվում է կառուցել ընդհանուր 37.3 կմ երկարությամբ, երկրորդ տեխնիկական կարգի ճանապարհ՝ 100 կմ/ժ հաշվարկային արագությամբ, երկու երթևեկելի գոտիով՝ մինչև չորս գոտու ընդլայնման հնարավորությամբ: Համաձայն նախագծի՝ կառուցվելու է 12 կամուրջ, 12 հանգույց, 1 թունել՝ 680մ երկարությամբ: 2018 թվականին կազմված նախահաշվով շինարարական աշխատանքների արժեքը կկազմի 57 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Կառավարման և խորհրդատվական ծախսերը կկազմեն մոտ 8 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդհանուր ծախսը կկազմի 65 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գյումրու շրջանցիկ ճանապարհահատվածն ամբողջությամբ նոր կառուցվող հատված է:

Նախագծման փուլ

ՀՀՃՄՆԾ Տրանշ 5-ի նախագիծը մշակվել է 2018 թվականին՝ ԵՆԲ տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում՝ իտալական «Լոթթի Ինջեներիա» ԲԸ և «Էյ Այ Սի Փրոջեթի» ԲԸ համատեղ գործող ընկերության կողմից: Գյումրու շրջանցիկ ճանապարհի նախագծի համաձայն՝ նախատեսվում էր կառուցել 23 կմ երկարությամբ տեխնիկական 2-րդ կարգի Ազատան-Քեթի ճանապարհը:

Սակայն, հաշվի առնելով տարածաշրջանում «չոր նավահանգստի» կառուցման հեռանկարը, որոշվել է անցնել 1-ին կարգի ճանապարհի կառուցմանը, ինչը էապես կբարձրացնի նախագծի ռազմավարական նշանակությունը: Նոր ճանապարհը կարող է դառնալ «Խաղաղության խաչմերուկի» կարևորագույն մասերից մեկը՝ կապելով արևմուտքը արևելքին, դյուրացնելով միջազգային բեռնափոխադրումները և ամրապնդելով Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային դերը:

Վերանայման անհրաժեշտություն

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Խորհրդատուի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են 6 տարի առաջ, առաջացել է նախագծանախահաշվային փաստաթղթերի վերանայման անհրաժեշտություն: Այս հարցը քննարկվել է ԵՆԲ-ի ներկայացուցիչների հետ, որոնց կողմից առաջարկվել է օգտվել «Տրանսպորտի ոլորտում ներդրումների համար արևելյան գործընկերության» (EPIC) ծրագրի գործիքակազմից:

ԵՆԲ-ի հետ Խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ համագործակցության համաձայնագիրը վավերացվել է ՀՀ Նախագահի կողմից:

Տեխնիկական աջակցության (ՏԱ) շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ առաջադրանքները՝

1. Տեխնիկատնտեսական հիմնավորման թարմացում,
2. Մանրամասն նախագծի փաթեթների վերանայում և արդիականացում,
3. Ծրագրի բյուջեի և նախահաշվի վերանայում և թարմացում,
4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության պատրաստում,
5. Մրցութային փաթեթի պատրաստում:

ՏԱ աշխատանքները կմեկնարկեն 2025 թվականի փետրվար ամսին:

Շինարարությունը նախատեսվում է սկսել 2026 թվականին:

3.9 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ-6 ՎԱՆԱՁՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Թումանյան-Բագրատաշենի սահմանային անցակետ կմ38+450-կմ90+191 հատվածի հիմնանորոգումը և Դիլիջանի և Պուշկինի թունելների վերականգնման մանրամասն նախագծերի պատրաստումը:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

Ծրագրի բյուջե՝ 52,972,386.33 եվրո, որից



41,395,781.40 եվրո վարկային միջոց

11 576 604,93 եվրո համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսված է ծախսերի ֆինանսավորում ԱԶԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի փվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No. 3449-ARM՝ ստորագրված 09.11.2016 թվականին Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 22 տարի (15 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ մասհանված գումարների նկատմամբ՝ 6-ամսյա EURIBOR+0.5% մարժա, ինչպես նաև տարեկան 0.15% չմասհանված վարկի գումարի նկատմամբ:

ԾՐԱԳՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐՆ ԵՆ՝

1. «Հորիզոն-95» ՍՊԸ և «Օքերոսլեր ԿԱՎ ՊԻԵՏՐՈՍ» ՍՊԸ համատեղ ձեռնարկություն,
2. «Բլաք Սի Գրուփ և ԱԱԲ Պրոեկտ» համատեղ ձեռնարկություն,
3. «Սուարդի» բաժնետիրական ընկերություն:

ԾՐԱԳՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐՆ ԵՆ՝

1. Շինարարության տեխնիկական հսկողության մասով՝ ֆրանսիական «Սաֆեժ ՍԱՍ և Հիլլ Ինթերնեյշնլ Էն.Վի.» համատեղ ձեռնարկություն (Ծրագրի ինժեներ),

2. Դիլիջանի և Պուշկինի թունելների վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման մասով՝ «ԲԵՌՆԱՐԴ Գրուպ» ՍՊԸ (Ավստրիա) և «Ակտես ԲԵՌՆԱՐԴ» ՍՊԸ (Ավստրիա) համատեղ ձեռնարկություն:

Ծրագրի ընթացիկ վիճակը

Ծրագրի շինարարական աշխատանքներն ավարտված են: Վերակառուցվել և շահագործման է հանձնվել 51.13 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհ:

Դիլիջանի և Պուշկինի թունելների վերականգնման մանրամասն նախագծման աշխատանքներն ընթացքում են:

Պուշկինի և Դիլիջանի թունելների վերականգնման նախագծերի պատրաստման համար անհրաժեշտ ուսումնասիրություններն ավարտված են: Հաշվետվությունները ներկայացված և հաստատված են:

2024 թվականի ընթացքում Խորհրդատուն փուլ առ փուլ ներկայացրել է Պուշկինի թունելի վերականգնման նախագծի նախնական էլեկտրոնային տարբերակը (անգլերեն), որն ուսումնասիրվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից և վերադարձվել լրամշակման:

Դիլիջանի թունելի ուսումնասիրության արդյունքներից ելնելով՝ նպատակահարմար է համարվել ոչ թե վերականգնման և արդիականացման նախագիծ մշակել, այլ նոր թունել նախագծել, ինչի համար լրացուցիչ տեղագրական, երկրաբանական և այլ հետազոտությունների իրականացման անհրաժեշտություն է առաջացել: Այդ նպատակով, Ասիական զարգացման բանկի համաձայնությամբ, պատրաստվել են նախագծման նոր առաջադրանք և Խորհրդատուի պայմանագրի համապատասխան փոփոխության համաձայնագրի նախագիծ, որը, ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2008 թվականի հոկտեմբերի 26-ի N 892-Ա որոշման պահանջներով, 2024 թվականի դեկտեմբերի 9-ին ներկայացվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի, Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոմոբիլային ճանապարհի (կմ38+450-կմ90+191 հատված) վերականգնման և բարելավման, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային և Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրերի կառավարման խորհրդի քննարկմանը:

Բանակցությունների արդյունքում ձեռք է բերվել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) նախնական համաձայնությունը 2024 թվականի մայիսի 25-ից 26-ը Հայաստանի հյուսիսային շրջաններում տեղի ունեցած հեղեղումների հետևանքով տուժած Մ-6, Վանաձոր (Մ-3 հատման կետ) – Ալավերդի - ՀՀ սահման (Բագրատաշեն) միջպետական նշանակության ճանապարհի հետաղետային վերականգնման և բարելավման, ինչպես նաև Ախթալայի, Քարկոփի և Այրումի նոր կամուրջների կառուցման նախագծային աշխատանքները գործող № 3449-ARM վարկի ազատ միջոցների հաշվին ֆինանսավորելու վերաբերյալ:

Ասիական զարգացման բանկը տրամադրել է նաև 150,000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհ՝ Մ-6 ավտոճանապարհի հետաղետային վերականգնման և բարելավման, ինչպես նաև Ախթալայի, Քարկոփի և Այրումի նոր կամուրջների կառուցման նախագծային աշխատանքների համար անհրաժեշտ՝ Դեբեդ գետի ջրաբանական հետազոտությունների ֆինանսավորման նպատակով: Հետազոտությունները մեկնարկել են 2024 թվականի դեկտեմբերին: Արդյունքները կներկայացվեն 2025 թվականի հունիսին:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2024թ. ընթացքում կատարված աշխատանքները, եվրո			2024թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, եվրո		
		այդ թվում			այդ թվում	այդ թվում	այդ թվում
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ-6, Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր, այդ թվում՝	779,070.72	767,378.99	11,696.73	1,339,451.09	1,258,705.12	140,745.97
1	Շինարարական աշխատանքներ, խորհրդատվություն և նախագծում	442,048.97	432,842.14	9,206.83	1,104,183.77	965,925.42	138,258.35
2	Պահպանման ծախսեր	337,021.74	334,531.85	2,489.89	295,267.32	292,779.70	2,487.62
3	Դրամաշնորհներ ՀՕՏԾ գծով	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

Ծրագրի ֆինանսական հոսքերն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2024թ.



3.10 ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԻ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ՀՀ հյուսիսային սահմանի արդիականացում և ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն-Սադախլո անցման կետում նոր կամրջի կառուցումը:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն սահմանային անցման կետի թողունակության ավելացում:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

Ծրագրի բյուջե՝ 7,730,581.87 եվրո, որից



6,100,000.0 եվրո վարկային միջոց

1,630,581.87 եվրո համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսված է ծախսերի ֆինանսավորում ՎԶԵԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի տվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ստորագրվել է 23.11.2012 թվականին Հյուսիսային սահմանի արդիականացման ծրագրի համար Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև, որից հետո 2014 թվականի դեկտեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կառավարությունների միջև կնքվել է միջկառավարական համաձայնագիր, որով ստեղծվել է միջկառավարական հանձնաժողով՝ ծրագիրը ՀՀ և Վրաստանի կողմից համատեղ իրականացնելու նպատակով:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 15 տարի է (4 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ վարկի տոկոսները հաշվարկվում են լողացող տոկոսադրույքով՝ 6-ամսյա EURIBOR + 1% մարժա:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԱԼԱՌՈՒՆ իրանական «Թունել Սադ Արիանա» ՓԲԸ-ն է:

ԾՐԱԳՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ (տեխնիկական վերահսկողը) կորեական «Սուսունգ էնժեներինգ» և «Կորեա Քընսալթանթս Ինթերնեյշնլ» Հ/Ձ-ն է:

2022Թ. ՀԱՆԴԻՍԱՑԵԼ Է ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է ԵՎ 2022Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՑԱԿԵՏՈՒՄ ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» ԿԱՄՐՋԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ: ԱՅՆ ՀԱՆՁՆՎԵԼ Է ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ:

Ծրագրի ընթացքը

2017 թվականի նոյեմբերի 2-ին սկսվել են կամրջի նախագծման աշխատանքները, որոնց արդյունքում կապալառուի կողմից ներկայացվել են նախագծի երեք տարբերակներ, որոնցից ընտրվել է նախալարված 50 ամրաններից բաղկացած, 5 թռիչքներով, 160մ երկարությամբ, 4 երթևեկելի գոտիներով երկու կամուրջների տարբերակը: Ընտրված տարբերակի նախագծանախահաշվային փաստաթղթերն անցել են պետական և հատուկ համալիր փորձաքննություններ, ստացել դրական եզրակացություն: Դրական եզրակացություններ են ստացվել երկու երկրների արտագերատեսչական փորձաքննական ընկերություններից կողմից: 2021 թվականի ապրիլի 15-ին տեղի է ունեցել հայ-վրացական միջկառավարական համատեղ նիստ, որով ընդունվել է նախագիծը, և տրվել շինարարության մեկնարկը: Այնուհետև, նույն թվականի հուլիսի 9-ին, տեղի է ունեցել շինարարության մեկնարկի պաշտոնական արարողությունը, որին մասնակցել են երկու երկրների կառավարությունների ներկայացուցիչները, ոլորտը համակարգող նախարարները, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ներկայացուցիչներ և այլ հյուրեր:

Ծրագրի շինարարության ընթացքն իրականացվել է պայմանագրային ժամկետի շրջանակներում: Ծրագրի շրջանակներում անցակետում տեղադրվել է նաև 30 մետր բարձրությամբ 6X10մ չափերով ՀՀ դրոշ, վերանորոգվել և ամրացվել է նաև անցակետի հին կամուրջը՝ որպես այլընտրանքային և վթարային անցակետ:

2022 թվականի օգոստոսի 14-ին կամուրջը հանձնվել է շահագործման ծրագրի տեխնիկական հսկողությունն իրականացնող ընկերության կողմից: Կամուրջն իր որակական և տեխնիկական բնութագրերով համապատասխանում է միջազգային ստանդարտներին և նորմերին: 2022 թվականի օգոստոսի 19-ին տեղի է ունեցել նոր կամրջի պաշտոնական բացման միջոցառումը՝ երկու երկրների վարչապետների մասնակցությամբ:

Ծրագրի արժեքի Հայաստանի Հանրապետության մասը կազմել է մոտ 4,500,000 եվրո, որն ամբողջ արժեքի 50%-ն է, ընդ որում, վերոնշյալ գումարի 20%-ի ֆինանսավորումն իրականացվել է պետական բյուջեի միջոցներով:

2023 թվականի հոկտեմբերին Տեխնիկական հսկողության ընկերությունը իրականացրել է շրջայց՝ թերությունների հայտնաբերման նպատակով և ներկայացրել համապատասխան հաշվետվություն: Արձանագրված թերությունները վերացվել են 2024 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին, և թողարկվել է շահագործման հավաստագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2024թ. ընթացքում կատարված աշխատանքները, եվրո			2024թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	"Բագրատաշեն" անցման կետի կամրջի վերակառուցում, այդ թվում՝	14,959.61	12,466.34	2,493.27	196,013.68	164,957.39	31,056.29
1	Շինարարական աշխատանքներ մաս	0.0	0.0	0.0	171,378.07	142,815.05	28,563.02
2	Խորհրդատվական ծառայություններ մաս	14,959.61	12,466.34	2,493.27	24,635.61	22,142.34	2,493.27
3	Այլ ծախսեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Հողերի օտարում և վերաբնակեցում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0



3.11 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագիրն իրականացվել է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի համագործակցության շրջանակներում:

Ծրագրի իրականացման նպատակով 2019 թվականի դեկտեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև ստորագրվել է թիվ FI 91.498 դրամաշնորհային համաձայնագիրը:

Ծրագրով նախատեսված է եղել իրականացնել մի շարք միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության բարելավմանն ուղղված շինարարական աշխատանքներ, ինչպես նաև ճանապարհների նախագծմամբ զբաղվող մի շարք հաստատություններում՝ ճանապարհային անվտանգության աուդիտորական կարողությունների զարգացման դասընթացի կազմակերպում:

Համաձայնագրով նախատեսված գումարը՝ 4.250.000 մլն եվրո:

Համաձայնագրի փակման ամսաթիվը՝ 21.12.2023թ.:

<u>Ակնկալվող արդյունքը</u>

Ծրագիրը բաղկացած է եղել երկու հիմնական՝ «Ճանապարհային անվտանգության հետ կապված աշխատանքներ և ենթակառուցվածքների բարելավում» և «Տեխնիկական աջակցություն» ուղղություններից, որոնց շրջանակներում նախատեսված է եղել հետևյալը՝

- ✓ ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների թվով 44 վթարավտանգ տեղամասերի երթևեկության անվտանգության բարելավման աշխատանքներ,
- ✓ Միջազգային չափանիշներին համապատասխան ճանապարհային անվտանգության աուդիտի վերապատրաստման դասընթացների իրականացում,
- ✓ Մ6 միջպետական նշանակության ճանապարհների վրա ճանապարհային անվտանգության իրազեկման վահանակների տեղադրում,
- ✓ ՀՀ գործող ճանապարհային անվտանգության ստանդարտների և նորմերի արդիականացման վերաբերյալ առաջարկների փաթեթի մշակում:

<u>Ճանապարհային անվտանգության հետ կապված աշխատանքներ և ենթակառուցվածքների բարելավում</u>

Նախատեսված միջոցառումների շրջանակներում՝ կապալառու կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն՝ իրականացվել են 7 միջպետական և 5 հանրապետական նշանակության ավտոճանապարհների 47 վթարավտանգ տեղամասերի, միջպետական նշանակության 1 ավտոճանապարհի 38,4 կմ երկարությամբ հատվածի անվտանգության էլեմենտների բարելավման աշխատանքներ, ինչպես նաև թեմատիկ 2 իրազեկման վահանակների տեղադրման աշխատանքներ:

Մ-3, կմ39+500 - կմ41+000	Մ-12 (փոփ.Մ-9), Խնձորեսկի խաչմերուկ

Տեխնիկական աջակցություն

Սույն միջոցառումների շրջանակներում՝ ճանապարհային անվտանգության ՀՀ գործող ստանդարտների և նորմերի արդիականացման վերաբերյալ կազմակերպվել է (2021թ.) աշխատաժողով: Խորհրդատուի կողմից մշակվել է փաստաթուղթ, որը շրջանառվել է ՀՀ շահագրգիռ պետական մարմիններում, այնուհետև ընդունվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից:

Ծրագրի շրջանակում կազմակերպվել է նաև ճանապարհային անվտանգության աուդիտի վերապատրաստման դասընթաց (2021թ.,) որի մասնակիցներից 19-ը ստացել են ճանապարհային անվտանգության աուդիտորի որակավորում:

Ծրագրի ընթացիկ կարգավիճակը

Թեև 2023 թվականի դեկտեմբերի 21-ի դրությամբ Ծրագրով նախատեսված միջոցառումներն ավարտվել են, նախատեսված շրջանակից 28 «սև կետերի» (վթարավտանգ տեղամասեր) բարելավման աշխատանքների իրականացման արդյունքում ավարտված շինարարական օբյեկտների համար 2024 թվականին դեռևս գործել է պայմանագրերով նախատեսված թերությունների համար պատասխանատվության ժամկետը (երաշխիքային

ժամկետ): Այդ ընթացքում Ծրագրի պատասխանատուների կողմից իրականացվել է մշտադիտարկում:

Ծրագրի ավարտից հետո (2024թ. ավարտին) կատարվել են նաև վերլուծություններ, որոնք ցույց են տվել, որ այն ճանապարհահատվածների վրա, որտեղ իրականացվել են վթարավտանգ տեղամասերի բարելավման աշխատանքներ՝ էականորեն նվազել է ՃՏՊ-ների քանակը (այդ թվում՝ մահվան ելքով): Մասնավորապես՝ 2019-2023թթ. միջին տարեկան ցուցանիշների նկատմամբ 2024թ. տվյալների համեմատությունը ցույց է տվել, որ ՃՏՊ-ների քանակը ծրագրի ճանապարհների վրա միասին վերցված նվազել է 72,6%-ով: Ստորև բերված են այլ մանրամասներ.

Ծրագրի ճանապարհների ՃՏՊ վիճակագրական տվյալներ



Տարեթիվ	ԸՆԴԱՄԵՆԸ			Նշումներ
	Պատահար	Զոհ	Վիրավոր	
2019	116	16	173	
2019/2020 միջին փոփոխական միտում	39.7%	-31.3%	67.1%	
2020	162	11	289	
2020/2021 միջին փոփոխական միտում	9.3%	109%	-0.3%	
2021 շինարարական միջամտությունների մեկնարկային տարի	177	23	288	Ծրագրային տարի (մեկնարկ)
2021/2022 միջին փոփոխական միտում	5.1%	-17.4%	4.2%	
2022	186	19	300	
2022/2023 միջին փոփոխական միտում annual average variation	-43.0%	-68.4%	-36.7%	
2023 շինարարական միջամտությունների ավարտման տարի	106	6	190	Ծրագրային տարի (ավարտ)
2023/2024 միջին փոփոխական միտում	-61.3%	33.3%	-66.3%	
2024	41	8	64	Հետծրագրային տարի
2023թ. տվյալների համեմատությունը աշխատանքների մեկնարկի տարեթվի (2021թ.) նկատմամբ	***-40.1%***	***-73.9%***	***-34.0%***	
2024թ. տվյալների համեմատությունը աշխատանքների մեկնարկի տարեթվի (2021թ.) նկատմամբ	***-76.8%***	***-65.2%***	***-77.8%***	
2024թ. տվյալների համեմատությունը 2019-2023թթ միջին տարեկան ցուցանիշների նկատմամբ	***-72.6%***	***-46.7%***	***-74.2%***	

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները
31.12.2024թ. դրությամբ

NN	Բաղադրիչներ, ենթածրագրեր և կատեգորիաներ*	Ծրագրով նախատեսված ծախսերը			2024թ. ընթացքում կատարված աշխատանքները, եվրո			2024թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, եվրո		
		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝	
			Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
1	2	3	4	5	7	8	9	11	12	13
	<u>Ընդամենը</u> այդ թվում՝	5,100,000.0	4,250,000.0	850,000.0	**268,912.7**	**224,093.9**	**44,818.8**	**683,112.9**	**570,017.9**	**113,095.0**
1	Շինարարական աշխատանքներ	5,100,000.0	4,250,000.0	850,000.0	268,912.7	224,093.9	44,818.8	683,112.9	570,017.9	113,095.0

4. ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական մասով. Հաշվետու ժամանակահատվածում ներքոնշյալ ծրագրերի իրականացման շրջանակներում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի բնապահպանության հարցերով մասնագետների կողմից իրականացվել են մշտադիտարկման շրջայցեր՝ բնապահպանական, առողջության և աշխատանքի անվտանգության պահանջների, ինչպես նաև բնապահպանական կառավարման պլաններով ամրագրված պահանջների համապատասխանության վերահսկողություն իրականացնելու, առկա վիճակն ուսումնասիրելու, խնդիրներին ծանոթանալու և լուծումներ առաջարկելու նպատակով: Ծրագրերն են՝

- ՀՀՃՄՆԾ Տրանշ 2, Ագարակի հնագիտական վայրը շրջանցող 8կմ (Մ-1 կմ 29+600-կմ 37+545) և 34 կմ անավարտ հատվածներ (Մ-1 կմ 37+545-կմ 71+500),
- ՀՀՃՄՆԾ Տրանշ 3 Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածներ,
- ՀՀՃՄՆԾ Տրանշ 4 Քաջարան Ագարակ հատված,
- Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի» Թումանյան-Բագրատաշենի մաքսային անցակետ հատված,
- Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման ծրագրի տեղամասեր:

Բոլոր ծրագրերն ունեն Շրջակա միջավայրի վրա ազդեցության և գնահատմանը վերաբերող փաստաթղթեր, ինչպես նաև Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ: Կախված շրջակա միջավայրի վրա ազդեցության չափից՝ ծրագրերից որոշներն ունեն նաև ՇՄԱԳ օրենքով նախատեսված փորձաքննական դրական եզրակացություն: Համապատասխան փաստաթղթերը հրապարակված են «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

Շինարարական հրապարակներում բնապահպանների կողմից դիտարկվում են շրջակա միջավայրի պահպանության պահանջների կատարման պայմանները (աշխատանքային անվտանգությունը, հատուկ համազգեստ, ակնոցներ, սաղավարտ կրելը, առաջին բուժօգնության դեղարկղի, կրակմարիչների, սանիտարական պայմանների առկայությունը և այլն): Հատուկ ուշադրություն է դարձվում շինարարական հրապարակում առողջության, անվտանգության ապահովմանը, շինհրապարակների կահավորմանը, աղմուկի և փոշու, թրթռման թույլատրելի մակարդակին, ջրային ռեսուրսների աղտոտման կանխարգելմանը, բուսականության հատման և տնկման աշխատանքներին, թափոնների կուտակմանը և պարբերաբար հեռացմանը: Բացի այդ, ստուգվում է աշխատանքային ճամբարների, բետոնի և ասֆալտի գործարանների առկայությունը և վիճակը, հողային հանույթի տեղամասերը, հողի բերրի շերտի և հողային թափոնների տեղադրման վայրերը: Մոնիթորինգի է ենթարկվում նաև կազմված փաստաթղթերի որակը: Հայտնաբերված խնդիրների լուծման համար «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի համապատասխան մասնագետի կողմից առաջարկվում է ուղղիչ գործողությունների պլան, ինչի իրականացումը ևս ենթարկվում է մոնիթորինգի:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նաև պլանավորվող ՀՀՃՄՆԾ Տրանշ 4 Սիսիան-Քաջարան և Քաջարանի թունելի նախապատրաստական աշխատանքները (բնապահպանական և մրցութային փաստաթղթերի վերանայում, հաշվետվությունների կազմում և այլն):

Միևնույն ժամանակ, իրականացվել են ՀՀՃՄՆԾ Տրանշ 5 Գյումրու շրջանցիկ ճանապարհահատվածի նախապատրաստական աշխատանքները, որը ներառում է նաև համապատասխան բնապահպանական փաստաթղթերի վերանայումը և կազմումը:

Սոցիալական պաշտպանության մասով.

ՀՀՃՄՆԾ Տրանշ 2, Ագարակ հնագիտական վայրը շրջանցող 8 կմ հատվածի ՀՕՏԾ իրականացում.

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են ՀՕՏԾ իրականացման աշխատանքները: Շինհրապարակը ամբողջությամբ տրամադրվել է Ծրագրի Կապալառուին:

ՀՀՃՄՆԾ Տրանշ 2, 34 կմ հատվածի դաշտամիջյան ճանապարհներ և մուտքեր դեպի հողամասեր.

Հաշվետու ժամանակահատվածում ՀՕՏԾ իրականացման աշխատանքներն ավարտվել են: Ընդհանուր ազդակիր **317** հողամասերից **263** հողամասերի համար կնքվել են օտարման պայմանագրեր և համաձայնագրեր, **42** հողամասեր օտարվել են դատական կարգով:

Մնացող **12** հողամասերի մասով պատրաստվել է Կառավարության որոշման նախագիծ՝ դրանք հանրության գերակա շահ ճանաչելու նպատակով: Հանրության գերակա շահ ճանաչելու անհրաժեշտությունը պայմանավորված է կադաստրային քարտեզներում առաջացած նոր ծածկագրերի, հողամասերի իրավունքի սուբյեկտների փոփոխությամբ, ինչպես նաև ՀՕՏԾ իրականացման փուլում առաջացած տեխնիկական խնդիրներով:

ՀՀՃՄՆԾ Տրանշ 3, Թալին-Լանջիկ հատված (ԱԶԲ).

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են ՀՕՏԾ Լրացում 1-ի իրականացման աշխատանքները: Նշված փաստաթղթում ներառված՝ դեպի համայնքներ ու մասնավոր հողամասեր մուտքերի կառուցման նպատակով օտարվող 32 հողամասերի օտարման գործընթացն ավարտվել է: Պատրաստվել է համապատասխանության հաշվետվություն և ներկայացվել ԱԶԲ հաստատմանը:

Նույն ՀՕՏԾ Լրացում 1-ը ներառում է նաև հաղորդակցուղիների տեղափոխման համար ազդակիր հողերի (շուրջ 300 հողամաս) վերաբերյալ տեղեկատվություն, սակայն ազդակիր հողամասերը հանրության գերակա շահ չեն ճանաչվել, քանի որ անհրաժեշտություն է առաջացել այս մասով ունենալ ՃԴ/ՏԿԵՆ հստակ դիրքորոշումը՝ օտարման գործընթացը կազմակերպելու համար: 2024 թվականի 3-րդ եռամսյակում որոշում է կայացվել օտարել հաղորդակցուղիներով ազդակիր հողամասերը: Այս կապակցությամբ Ծրագրի Ինժեների պայմանագրի փոփոխություն է իրականացվել, ինչպես նաև ԱԶԲ-ի կողմից տրամադրվել է մոտ 25.000 ԱՄՆ դոլար տեխնիկական աջակցություն՝ ՀՕՏԾ Լրացում-1-ի գնահատված գույքերը վերագնահատելու համար խորհրդատուի ծառայություններ գնելու համար:

ՀՀՃՄՆԾ Տրանշ 3, Լանջիկ-Գյումրի հատված (ԵՆԲ).

Հաշվետու ժամանակահատվածում Բենիամին համայնքի մոտակայքում հնագիտական վայրը շրջանցելու նպատակով ՀՕՏԾ Լրացում 1-ի օտարման գործընթացն ավարտվել է: Ընդհանուր **102** հողամասերից **84** հողամասի օտարման պայմանագրեր են կնքվել, իսկ **18** հողամասեր օտարվել են դատական կարգով: Պատրաստվել է համապատասխանության հաշվետվություն:

Լանջիկ-Գյումրի հատվածի մուտքերի և մոտեցնող ճանապարհների կառուցման նպատակով ՀՕՏԾ Լրացում 2-ի պատրաստման աշխատանքները ավարտվել են, սկսվել է օտարման գործընթացը: Ընդհանուր **120** հողամասերից **101** հողամասի օտարման պայմանագրեր են կնքվել, իսկ 19 հողամաս օտարվել է դատական կարգով: Պատրաստվել է համապատասխանության հաշվետվություն:

ՀՀՃՄՆԾ Տրանշ 4, Քաջարան-Ագարակ հատված.

Հաշվետու ժամանակահատվածում ՀՕՏԾ իրականացման աշխատանքներն ավարտվել են: Ընդհանուր **1031** հողամասերից օտարման պայմանագրեր և համաձայնագրեր են կնքվել **1002** հողամասերի համար: Դատական կարգով օտարման գործընթացում են գտնվում **29** հողամասերի վերաբերող գործեր:

Ծրագրի Լոտ 1 ենթահատված 1, 2 և 3-ի համապատասխանության հաշվետվություններ իրենց հավանությունն են ստացել ԵԶՀ-ի կողմից, և դրանցում ներառված հողամասերը տրամադրվել են Կապալառուին:

ՀՀՃՄՆԾ Տրանշ 4, Սիսիան-Քաջարան հատված.

Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել են ՀՕՏԾ իրականացման աշխատանքները: Խորհրդատուի կողմից ընդհանուր **583** հողամասերից **132** մասնավոր հողատարածքների համար կազմվել են օտարման պայմանագրերի նախագծեր, որոնք 2024 թվականի օգոստոսի 30-ին ծանուցվել են հողամասերի սեփականատերերին/համասեփականատերերին, իսկ **225** չգրանցված համայնքային հողամասերի մասով Ծրագրի Խորհրդատուն մեկնարկել է առաջին պետական գրանցման գործընթաց:

Մնացող **226** հողամասերի մասով «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից շրջանառվել է ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի թիվ 981-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու

մասին որոշման նախագիծը, քանի որ Որոշման կատարման ընթացքում (մինչև ազդակիր հողամասերի սեփականատերերին հողամասերի նկարագրության արձանագրությունների ծանուցումը) ազդակիր համայնքների կադաստրային քարտեզներում տեղի են ունեցել փոփոխություններ, որի արդյունքում որոշ հողատարածքների ազդակիր մակերեսները փոփոխվել են (մեծացել կամ փոքրացել են), իսկ որոշ հողատարածքներ ընդգրկվել են օտարման գոտում, ուստի անհրաժեշտություն է առաջացել 226 հողամասերի ազդակիր տարածքները ճանաչել հանրության գերակա շահ:

Նշվածով պայմանավորված՝ նախագծով առաջարկվել է Ծրագրի կարիքների համար 226 հողամասերի ազդակիր հատվածները կրկին հանրության գերակա շահ ճանաչել՝ վերջիններիս նկատմամբ սկսելով նոր օտարման գործընթաց, ինչը թույլ կտա ապահովել հողերի սեփականատերերի՝ օրենքով սահմանված իրավունքների իրականացման հնարավորությունը: Կառավարության որոշումը հրապարակվել է 2024 թվականի դեկտեմբերի 27-ին:

5. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆՃԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամն իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհային ցանցի զարգացման ու դրա նպատակային օգտագործման, պահպանման և հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացմանն օժանդակություն: Նշված կանոնադրական նպատակից ելնելով՝ Հիմնադրամն իրականացնում է հետևյալ գործառույթները.

Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի ուսումնասիրություն. Ավտոմոբիլային ճանապարհների հետազոտման նպատակն է բացահայտել ասֆալտբետոնե ծածկի առկա թերությունները՝ վերականգնման ռազմավարություն մշակելու համար: Ասֆալտբետոնե ծածկի ուսումնասիրությունն իրականացվում է միջազգային անհարթության գործակցի IRI (մմ/մ) որոշման և ակնադիտական հետազոտման միջոցով:

Անհարթության գործակիցը (IRI) որոշվում է DYNATEST 5051 Mk-IV RSP համակարգի միջոցով, որը տեղակայված է RENAULT DUSTER մակնիշի ավտոմեքենայի վրա:

Ակնադիտական հետազոտման միջոցով որոշվում են ասֆալտբետոնե ծածկի ճաքերի (երկայնական (մ^2), լայնական (մ^2), ցանցաձև (մ^3), փոսերի (մ^3), մաշվածության մակերեսի (մ^2) և քայքայված եզրամասի (մ^2) ծավալները: Ակնադիտական հետազոտման և IRI (մմ/մ) միջազգային անհարթության գործակցի արդյունքները գրանցվում են հետազոտման ամփոփագրում: Անհրաժեշտության դեպքում կառուցվում են անհարթության, ճաքայնության, փոսայնության, կառուցվածքի փոփոխության և եզրամասի քայքայման գրաֆիկներ:

Իրականացվել են ճանապարհահատվածների ուսումնասիրման համար անհրաժեշտ նախապատրաստական և պլանավորման աշխատանքներ, ինչպես նաև պարբերաբար իրականացվել են միջազգային անհարթության գործակիցը չափող սարքավորումների կարգաբերման աշխատանքներ:

2024 թվականի ընթացքում ուսումնասիրվել են 1658.1 կմ ընդհանուր երկարությամբ (ներառյալ 134.5կմ I տեխնիկական կարգի) միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհահատվածներ, այդ թվում՝ միջպետական նշանակության՝ 995.25կմ և հանրապետական նշանակության՝ 662.85կմ:

2024թ.	Նախատեսված	Փաստացի
	1600կմ	1658.1կմ

Երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրում. Հայաստանի Հանրապետության 7 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների 10 կետերում տեղակայված են ավտոմոբիլային տրանսպորտի ինտենսիվությունը չափող առցանց աշխատող SIEMENS մակնիշի հաշվիչներ:

Ստացված ինտենսիվության տվյալները հանդիսանում են HDM-4 տնտեսագիտական վերլուծության ծրագրի մուտքային տվյալ (AADT – միջին օրական ինտենսիվությունը տարվա կտրվածքով):

Կատարվել են Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհներին տեղակայված հաշվիչների կարգաբերման աշխատանքներ և տրանսպորտային միջոցների ինտենսիվությունը չափող հաշվիչների տվյալների հավաքագրում:

Հաշվետու տարում մշտական տեղադրված հաշվիչներից, ինչպես նաև շարժական հաշվիչներով և ակնադիտական եղանակով տվյալների հավաքագրման նպատակով իրականացվել է 126 այցելություն 113 կետերում:

2024թ.	Նախատեսված	Փաստացի
հաշվեկետ	102	113
այցելություն	125	126

Կատարվել է հավաքագրված տվյալների ամփոփում, մուտքագրում համակարգիչ և համապատասխան վերլուծություն:

Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակմանը. Հիմնադրամի մասնագետների կողմից պարբերաբար իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

• տեխնիկական և մասնագիտական աջակցություն ոլորտի խորհրդատուներին (առկա և առցանց),

• մասնակցություն միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարներին, կոնֆերանսներին և քննարկումներին (առկա և առցանց):

2024 թվականի ընթացքում Հիմնադրամի մասնագետների կողմից հավաքագրված, ամփոփված և համադրված տվյալների հիման վրա համակարգչային HDM-4 տնտեսագիտական վերլուծությունների մոդելի միջոցով կազմվել են ուսումնասիրված ճանապարհահատվածների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ վերականգնման ծրագրեր: 2026թ. և 2027-2029թթ. վերականգնմանն առաջարկվող ճանապարհահատվածների վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել են 2024 թվականի տարեկան հաշվետվության հավելվածում:

Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, գույքագրվել և տեսաձայնագրվել են միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհահատվածներ՝ շուրջ 606.85 կմ ընդհանուր երկարությամբ, այդ թվում՝ միջպետական նշանակության՝ 145.37կմ, հանրապետական նշանակության՝ 132.38կմ և մարզային (տեղական) նշանակության՝ 329.1կմ ավտոմոբիլային ճանապարհ:

2024թ.	Նախատեսված	Փաստացի
	600կմ	606.85կմ

Իրականացվել է դաշտային աշխատանքների ընթացքում հավաքագրված տվյալների ամփոփում և վերլուծություն, ինչպես նաև տվյալների շտեմարանի վարում:

Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում. Հաշվետու տարվա ընթացքում երթևեկության անվտանգության բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացման նպատակով կատարվել են տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքներ: Մասնավորապես՝

1. ՀՀ ՆԳՆ կառուցվածքային փոփոխությունների հետևանքով ճանապարհատրանսպորտային պատահարների (այսուհետ՝ Պատահարներ) վերաբերյալ տեղեկատվություն է ստացվում ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Պարեկային ծառայությունից

(այսուհետ՝ Ծառայություն), որին հանձնարարված է իրականացնել Պատահարների հաշվառման գործառույթը:

2. Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին՝ 2024 թվականին տեղի ունեցած Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և կազմակերպման իրավիճակների և վթարայնության վերաբերյալ տեղեկատվություն հիմնականում ստացվել են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական ծառայությունների, կազմակերպությունների, քաղաքացիների, ինչպես նաև կապալառու կազմակերպությունների հաղորդագրությունների, դիմումների, առաջարկությունների և այլ գրությունների միջոցով: Յուրաքանչյուր դեպքում կատարվել են նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համապատասխան ուսումնասիրություններ և տրվել են պարզաբանումներ, կարծիքներ, բարելավման առաջարկություններ և այլն:

3. Պատահարների կանխմանն ուղղված 6 միջոցառումներ են կազմակերպվել ՆԳՆ ոստիկանության հետ: Վերջինիս հետ գծապատկերների ներկայացմամբ կամ առանց դրանց համաձայնեցվել են միջպետական նշանակության ավտոճանապարհների 5 կամուրջների հիմնանորոգման, նորոգման աշխատանքների ընթացքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման կամ այդ վայրերի շրջանցման տարբերակները, և ներկայացվել են շինարարական կազմակերպություններին:

Կատարվել են աշխատանքներ ճանապարհներին լուսացուցային օբեկտներ, այդ թվում՝ «կանչով» փուլով գործող լուսացույցների կիրառման ուղղությամբ (Արտաշատ քաղաքի տարածքով անցնող Հ-8 ճանապարհի հատված, Մ-1 ճանապարհի Պռոշյան բնակավայրի մատույցներ և այլն):

4. Ճանապարհների անվտանգության ապահովման և ճանապարհային երթևեկության կազմակերպման (այսուհետ՝ ՃԵԿ) կանոնակարգման նպատակով տեղեկատվությամբ ստացված նյութերի թեմաներով կազմակերպվել են 61 ակնադիտական ուսումնասիրություններ, կազմվել են իրավիճակների 50 գծապատկերներ, որոնք սահմանված կարգով համաձայնեցվել են ՏԿԵ նախարարության և Ոստիկանության

հետ: Գծապատկերներով տրված լուծումները ներկայացվել են ՏԿԵ նախարարություն՝ համապատասխան իրավիճակները կանոնակարգելու համար:

Միաժամանակ Հիմնադրամ ներկայացված գրությունների վերաբերյալ տրվել են 66 կարծիք, 39 պարզաբանում, 34 տեղեկատվություն, 55 առաջարկություն:

Ռազմավարական ծրագրերի ու միջոցառումների վերաբերյալ և այլ թեմաներով 21 առաջարկներ ընդունվել են ի գիտություն:

5. Մ-6 ճանապարհի իրար հաջորդող 3 թունելների վիճակի վերաբերյալ բացասական արձագանքի կապակցությամբ կատարվել են ակնադիտական ուսումնասիրություններ, որոնց արդյունքում հայտնաբերվել են միջամտություններ պահանջող թերություններ և ներկայացվել ՏԿԵ նախարարություն:

6. ՀՀ ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում 29 նախագծերի վերաբերյալ տրվել են մասնագիտական եզրակացություններ, որոնք ներկայացվել են նախագծային կազմակերպություններին՝ նախագծերում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու համար:

7. ՏԿԵ նախարարության և այլ մարմինների կողմից ներկայացված նորմատիվատեխնիկական փաստաթղթերում լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկների վերաբերյալ տրվել են կարծիքներ:

2024թ.	Նախատեսված	Փաստացի
այցելություն	18	22

6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հիմնադրամի կողմից իրականացվում է միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում, ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի մասնագետների կողմից ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների պատշաճ սպասարկման ապահովման նպատակով իրականացվել է կապալառուների կողմից իրականացված ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների նկատմամբ մասնագիտական հսկողություն հետևյալ մարզերում.

Մարզի անվանումը	*Սպասարկվող ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը, կմ*	
	Ամառային	*Ձմեռային*
Արագածոտն	258.79	258.89
Արարատ	244.0	225.35
Արմավիր	211.3	184.9
Գեղարքունիք	401.15	318.05
Կոտայք	277.72	248.29
Լոռի	346.8	307.52
Շիրակ	274.6	249.4
Սյունիք	542.88	463.24
Վայոց Ձոր	211.8	191.7
Տավուշ	344.0	317.4
ԸՆԴԱՄԵՆԸ	**3113.04**	**2764.74**

Ընթացիկ ամառային պահպանման ժամանակահատվածն է ապրիլի 1-ից նոյեմբերի 15-ը: Ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածն է նոյեմբերի 16-ից մինչ հաջորդ տարվա մարտի 31-ը:

Ձմեռային պահպանման ժամանակահատվածում կազմակերպվել է շուրջօրյա հերթապահություն ավտոճանապարհների անցանելիության վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

Հերթապահությունն իրականացվել է հետևյալ գրաֆիկով՝

- աշխատանքային օրերին՝ ժամը 18^{00} մինչև հաջորդ օրվա 9^{00}
- ոչ աշխատանքային և տոնական օրերին՝ շուրջօրյա:

Հիմնադրամի կողմից իրականացվում է նաև պարսպող համակարգերի պահպանման (948.644 գծմ) և գծանշման (653.786 մ^2) աշխատանքների նկատմամբ մասնագիտական հսկողություն:

Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի ինժեներների կողմից միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների և կամուրջների պահպանման աշխատանքների կատարման նկատմամբ իրականացվել է մասնագիտական հսկողություն.

- **Թունելներ՝ 3 հատ**
- **Կամուրջներ՝ 5 հատ**

Հիմնադրամի կողմից իրականացվել է ավտոմոբիլային ճանապարհների, առանձին պահպանման հանձնվող թունելների և կամուրջների պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով:

2024թ.	Նախատեսված	Փաստացի
	15 այցելություն	15 այցելություն

Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում, հսկողություն և գնահատում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են միջին նորոգման ենթակա ճանապարհահատվածների ուսումնասիրություններ և թերությունների ակտերի կազմման աշխատանքներ:

Կազմվել են միջին նորոգման թերությունների ակտեր, իրականացվել է շուրջ 123կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների վերանորոգման աշխատանքների հսկողություն:

Վերանորոգման աշխատանքների հսկողության արդյունքում ապահովվել է ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների պատշաճ իրականացումը:

2024թ.	Նախատեսված	Փաստացի
Ուսումնասիրություն, այցելություն	19	21
Հսկողություն, այցելություն	172	176

ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերի իրականացման աշխատանքների մասնագիտական աջակցություն. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ՀՀ պետական բյուջեի 1049 «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի 21001 Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» և 21002 «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառումների ապահովման նպատակով սահմանված պատասխանատու ստորաբաժանման գործառույթներից բխող աշխատանքներ: Մասնավորապես՝ «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով 2024 թվականին իրականացվել են շուրջ 114 կմ ընդհանուր երկարությամբ 26 ճանապարհահատվածների, 9 տրանսպորտային օբյեկտների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման գնման հայտերի կազմման և ներկայացման, գնման գործընթացների աջակցման և կազմակերպման, դրանց համար ֆինանսական միջոցների

վերաբաշխման, վճարման համաձայնագրերի կնքման հայտերի կազմման և ներկայացման գործընթացներ:

Հայտարարված մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի մասով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են շուրջ 397.7 կմ ընդհանուր երկարությամբ թվով 49 ճանապարհահատվածների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման և շուրջ 394 կմ ընդհանուր երկարությամբ թվով 32 ճանապարհահատվածների նախագծերի փորձաքննության ծառայությունների մշտադիտարկման և հանձնման-ընդունման գործընթացներ: Իրականացվել են նաև թվով 16 տրանսպորտային օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման գործընթացներ:

Իրականացվել են նաև շուրջ 199.9 կմ ընդհանուր երկարությամբ թվով 28 ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման հայտերի կազմման, ներկայացման և գնման գործընթացներին աջակցման, թվով 12 տրանսպորտային օբյեկտի հիմնանորոգման աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման մրցույթային գործընթացների աջակցման և կազմակերպման գործընթացներ:

Իրականացվել են նաև 336.3 կմ ընդհանուր երկարությամբ 76 ճանապարհահատվածների և 10 տրանսպորտային օբյեկտի շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար ֆինանսական միջոցների վերաբաշխման, վճարման համաձայնագրերի կնքման համար հայտերի կազմման և ներկայացման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են շուրջ 336.3 կմ ընդհանուր երկարությամբ 76 ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների՝ ներառյալ 2022 թվականին սկսված և 2024թ տեղափոխված ճանապարհահատվածների հիմնանորոգման, կառուցման և վերակառուցման աշխատանքների մշտադիտարկում, կատարված աշխատանքների գնահատում, կատարված աշխատանքների հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպում:

Ծրագրում ներառված ճանապարհահատվածների և տրանսպորտային օբյեկտների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման, փորձաքննության ծառայությունների, շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների համար ֆինանսական միջոցներ նախատեսելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում մշակվել և շրջանառվել է ՀՀ կառավարության որոշման 13 նախագիծ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի գործառույթներին առնչվող գրությունները, դիմումները, առաջարկությունները, կազմվել և ներկայացվել են համապատասխան մասնագիտական կարծիքներ և դիրքորոշումներ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են նաև ՀՀ մարզերից ստացված սուբվենցիայի ծրագրային ամբողջական փաթեթներ, հայտերի գնահատման նպատակով ներկայացվել են մասնագիտական դիրքորոշումներ:

2024թ.	Նախատեսված	Փաստացի
Հսկողություն, այցելություն	163	172

Լաբորատոր փորձաքննությունների իրականացում. Հիմնադրամը ՀՀ պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի և/կամ ճանապարհների վերականգնման, պահպանման պատասխանատու ստորաբաժանման առանձին հանձնարարականների դեպքում իրականացնում է լաբորատոր փորձարկումներ:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Իրականացվել են լաբորատոր սարքավորումների և գործիքների վիճակի կարգաբերում, մաքրում, թերությունների վերացում.
- Մասնագիտական խորհրդատվական աջակցություն է տրամադրվել շինարարական մի շարք կազմակերպությունների՝ ճանապարհաշինարարության ոլորտում օգտագործվող շինարարական նյութերի վերաբերյալ: Շինարարության համար պարբերաբար իրականացվել է հսկողություն շինարարական նյութերի օգտագործման մասով:

Կատարվել են շինարարական նյութերի հետազոտական աշխատանքներ (խճի, կոպիճի, ավազի, բիտումի, հանքային փոշու և ա/բ-ի)՝ 138 փորձարկում:

Փորձարկումների արդյունքները տրամադրվել են լիազոր մարմնին և համապատասխան կապալառուին:

2024թ.	Նախատեսված (հատ)	Փաստացի (հատ)
Հանուկների հանում և տեղափոխում	93	113
Փորձարկումներ	118	138

Լաբորատորիայի կողմից իրականացվող գործառույթները նպաստել են ճանապարհաշինության ոլորտում օգտագործվող շինարարական նյութերի և պատրաստի արտադրանքի պահանջվող որակի ապահովմանը:

7. ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

2024 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Հիմնադրամն ունի 148 հաստիքային միավոր:

Մեծապես գնահատելով և կարևորելով Հիմնադրամի աշխատակիցների մասնագիտական գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև կարևորելով Հիմնադրամի դերը վերջիններիս մասնագիտական կարողությունների հետևողական և շարունակական կատարելագործման հարցում՝ Հիմնադրամի կողմից պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ:

2024 թվականի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են հետևյալ վերապատրաստումները, սեմինար-քննարկումներն ու աշխատաժողովները՝

1. Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման 2-րդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում 2024թ. իրականացվել են 14 վթարավտանգ հատվածների բարելավման աշխատանքներ: «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ «FRED Engineering S.r.l.» և «IRD Engineering S.r.l.» կազմակերպություններից կազմված համատեղ ձեռնարկությունն իրականացրել է նշված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն: Ի թիվս այլ առաջադրանքների՝ պայմանագրով նախատեսված է եղել նաև դասընթաց «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աշխատակիցների համար: Վերոնշյալով պայմանավորված՝ փետրվարի 6-ին կազմակերպվել է ճանապարհային անվտանգության հարցերի թեմայով սեմինար: Դասընթացը վարել է Իտալիայից ժամանած ճանապարհային անվտանգության մասնագետ Պաոլա Տիբերին:

Ծրագիրը ֆինանսավորվել է Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության կողմից:

2. ՀՀ ՆԳՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2024 թվականի ապրիլի 18-ին կազմակերպվել է «Կապի և ազդարարման համակարգերի ձևավորման, գործունեության կայունության ապահովման հարցերը ռազմական դրության և արտակարգ իրավիճակների դեպքում» խորագրով դասընթաց:

3. 2024 թվականի ապրիլի 15-19-ը Հաագայում՝ Նիդեռլանդներում, կազմակերպվել է ջրային ուսուցման շաբաթ, որը կազմակերպվում է յուրաքանչյուր տարի՝ սկսած 2012 թվականից՝ հիմնվելով կոնկրետ թեմայի վրա, խթանելով երկխոսությունները և գիտելիքների փոխանակումը փորձագետների, քաղաքականություն մշակողների և պրակտիկ մասնագետների միջև: 2024 թվականին համագործակցելով Ասիական Զարգացման բանկի և Նիդեռլանդների ջրային գործընկերության (NWP) հետ՝ կենտրոնացել են «Բնության վրա հիմնված լուծումներ (NBS)» ջրի անվտանգության մարտահրավերները, կանաչ և կայուն քաղաքային խնդիրները լուծելու և զարգացնելու վրա:

4. Ասիական զարգացման բանկի կողմից Տաջիկստանի Հանրապետության մայրաքաղաք Դուշանբեում 2024 թվականի մայիսի 6-10-ը Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանի շահագրգիռ կողմերի հետ կազմակերպվել է «Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի թարմացում» թեմայով տարածաշրջանային խորհրդակցություն:

5. «Վերափոխելով Հայաստանում ճանապարհային երթևեկության անվտանգությունը» ծրագրի շրջանակներում ճանապարհային երթևեկության ոլորտի մասնագետների համար 2024 թվականի հունիսի 10-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում կազմակերպվել է կարողությունների զարգացման դասընթաց:

6. 2024 թվականի հունիսի 12-13-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղի է ունեցել Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների շինարարական ֆորումը, որը կազմակերպվել է Վրաստանի խորհրդատու ինժեներների ասոցիացիայի կողմից: Համաժողովին մասնակցել են տարածաշրջանի FIDIC անդամ ասոցիացիաների ներկայացուցիչները, FIDIC պայմանագրերով աշխատող պետական կառույցների, միջազգային ֆինանսական, խորհրդատվական և կապալառու կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև վեճերի լուծման խորհրդի անդամներ FIDIC նախագահների ցանկից և միջազգային իրավաբաններ շինարարության ոլորտից:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը միջազգային գործընկերների հետ նախաձեռնել է իրականացնել գնումների համակարգի MAPS գնահատում, որի

շրջանակում սույն թվականի հուլիսի 10-ին և 17-ին գնահատումն իրականացնող թիմի ներկայացուցիչների հետ հեռավար եղանակով կազմակերպվել է աշխատանքային հանդիպումներ:

8. Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից բնապահպանական և սոցիալական քաղաքականության ներկայացման նպատակով սույն թվականի հուլիսի 11-ին կազմակերպվել է մեկօրյա աշխատաժողով:

9. 2024 թվականի օգոստոսի 13-ին Ասիական Զարգացման բանկի կողմից կազմակերպվել է մեկօրյա աշխատաժողով բնապահպանական կարողությունների զարգացման թեմայով:

10. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կազմակերպմամբ և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ օգոստոսի 27-ից 30-ը տեղի է ունեցել ճանապարհային անվտանգության և սև կետերի մոնիթորինգի վերաբերյալ քառօրյա դասընթաց: Այն անցկացվել է ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի շրջանակներում: Դասընթացի նպատակն է եղել զարգացնել և ընդլայնել համապատասխան մարմինների, շահագրգիռ կողմերի կարողությունները ճանապարհային անվտանգության և սև կետերի մոնիթորինգի ոլորտներում: Դասընթացը վարել է միջազգային փորձագետ Վալտեր Վիտին: Կազմակերպվել է նաև այցելություն Մ-4, Երևան-Սևան ճանապարհ, որտեղ անցկացվել են պրակտիկ պարապմունքներ:

11. Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Վաղ գործողությունների աջակցություն՝ «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» համատեքստում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 2024 թվականի սեպտեմբերի 30-ին իրականացվել է աշխատաժողով:

12. 2024 թվականի սեպտեմբերի 10-13-ը Ասիական Զարգացման բանկի մշտական առաքելությունն անցկացրել է մասնագիտացված դասընթաց՝ Խորհրդատու ինժեներների միջազգային ֆեդերացիայի (FIDIC) պայմանագրերի կառավարման վերաբերյալ՝ Հայաստանի Ծրագրերի իրականացման ստորաբաժանումների (ԾԻԳ-երի) համար՝

պայմանագրերը կառավարելու և ԾԻԳ-երի կառավարման կարողությունները բարձրացնելու նպատակով:

13. 2024 թվականի սեպտեմբերի 16-17-ը Ասիական Զարգացման բանկի հայաստանյան մշտական առաքելությունն իրականացրել է «Վարկի և դրամաշնորհների տրամադրման» թեմայով սեմինար՝ կատարող և իրականացնող գործակալությունների ներկայացուցիչների և ԱԶԲ-ի անձնակազմի համար: Սեմինարն անցկացվել է ԱԶԲ-ի վերահսկիչ բաժնի կողմից և նպատակ է ունեցել պարզաբանել հատկացման քաղաքականությունը, ընթացակարգերը և ուղեցույցները՝ ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում հատկացումների ավելի արդյունավետ գործառնությունների համար:

14. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում 2024 թվականի սեպտեմբերի 20-ին տեղի է ունեցել «ՀՀՇՆ 32-03.02-2024. Կամուրջների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում հիմնական դրույթներ» նորմերին նվիրված սեմինար, որին մասնակցել է Մ6 ծրագրի ավագ ինժեները:

15. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աշխատակիցները 2024 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը մասնակցել են Երևանում անցկացվող Եվրասիական տնտեսական երրորդ համաժողովին: Համաժողովն այս տարի անցկացվել է «ԵԱՏՄ 10 տարիները. հեռանկարներ և առաջնահերթություններ» խորագրի ներքո: Հիմնադրամի ներկայացուցիչները ներկա են եղել «Եվրասիական տրանսպորտային կոմունիկացիաներ և դրանց ապագան» խորագրով քննարկմանն ու Իրանի հետ գործարար երկխոսության թեմայով կլոր սեղան-քննարկմանը:

16. 2024 թվականի հոկտեմբերի 7-ին Ասիական զարգացման բանկի հայաստանյան մշտական առաքելությունում «Կլիմայի շաբաթ» է անցկացվել, որի շրջանակում մեկնարկել է կառավարության ներկայացուցիչների և նախարարությունների կարողությունների զարգացման սեմինարը:

17. ՀՀ ֆինանսների նախարարի 28.03.2024թ. N 84-Ա հրամանով 2024 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Հիմնադրամի գնումների մասնագետները մասնակցել են գնումների համակարգողների 2024 թվականի շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

18. Ներքին գործերի նախարարությունն Ասիական զարգացման բանկի հետ համատեղ «Հայաստանում սեյսմիկ անվտանգության բարելավման և հանրային ենթակառուցվածքների կառավարման ֆինանսավորման ռազմավարության մշակում» ծրագրի շրջանակներում 2024թ. հոկտեմբերի 15-ին կազմակերպել է միջանկյալ աշխատարան, որի ընթացքում ներկայացվել և քննարկվել են ծրագրի իրականացման աշխատանքների միջանկյալ արդյունքները, ինչպես նաև ուսումնասիրություններից բխող հիմնական եզրակացությունները:

19. Ասիական զարգացման բանկի կողմից 2024 թվականի նոյեմբերի 4-ից մինչև նոյեմբերի 8-ը Գնումների պատասխանատուների Հավաստագրման միջազգային ծրագրի՝ մոդուլ 3-ի շրջանակներում կազմակերպվել է սեմինար Իտալիայի Հանրապետության Թուրին քաղաքում, որին մասնակցել է Հիմնադրամի գնումների բաժնի պետը:

20. Ասիական զարգացման բանկը 2024 թվականի նոյեմբերի 8-ին կազմակերպել է Ֆինանսական կառավարման (FM) սեմինար դասընթաց՝ որպես կատարող և իրականացնող գործակալության անձնակազմի կարողությունների զարգացման տարեկան նախաձեռնության մաս: Սեմինարը նախատեսված է եղել ընդլայնել գործակալության անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները ԱԶԲ-ի ֆինանսական կառավարման նորացված պահանջների վերաբերյալ: Այն ներառել է կիզակետային ոլորտները:

21. Ասիական զարգացման բանկի կողմից Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանի շահագրգիռ կողմերի հետ 2024 թվականի նոյեմբերի 21-23-ը կազմակերպվել է «Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի թարմացում» թեմայով տարածաշրջանային խորհրդակցություն Ուզբեկստանի Հանրապետության մայրաքաղաք Տաշքենդում, որին մասնակցել է Հիմնադրամի սոցիալական ազդեցությունների և վերաբնակեցման կառավարման բաժնի պետը:

22. 2024 թվականի նոյեմբեր ամսին կազմակերպվել են պետական մարմինների աշխատակիցների համար «Կլիմայական բյուջե. Կլիմայական բյուջետային ծախսերի նշագրում» թեմայով վերապատրաստման դասընթացներ: Բյուջետային ծախսերի

նշագրման աշխատանքներն արդյունավետ իրականացնելու, աշխատակիցներին տեղում ուղղորդելու նպատակով կազմակերպվել են հանդիպումներ ՄԱԶԾ «Կլիմայական խոստում Հայաստան. խոստումից ազդեցություն» ծրագրի վերապատրաստումն իրականացրած փորձագետների թիմի և շահառու գերատեսչությունների համապատասխան աշխատակիցների հետ:

23. 2024թ. նոյեմբերի 20-22-ը անցկացվել է Գետային ճարտարագիտության խորագրով սեմինար շվեցարական Զարգացման և համագործակցության գործակալության ու ՆԳ նախարարության հետ:

24. 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ԿԶՆ նորարարության կենտրոնի կողմից հիմնադրված «Հանրային ոլորտի նորարարների համայնքը» կազմակերպել է իր երկրորդ աշխատաժողովը: Միջոցառումը տեղի է ունեցել Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության «Ժողովրդավարական հաստատությունները և մասնակցային քաղաքականությունները Հայաստանում» (DIPPA) ծրագրի համատեքստում, որը գործում է վարչապետի գրասենյակի հովանու ներքո և իրականացվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և ՄԱԶԾ Հայաստանի կողմից:

25. 2024 թվականի դեկտեմբերի 9-ին տեղի է ունեցել առցանց տեղեկատվական հանդիպում՝ 2025 թվականի փետրվարի 18-ից 20-ը Մարաքեշում կայանալիք Ճանապարհային անվտանգության 4-րդ համաշխարհային նախարարական համաժողովի վերաբերյալ:

Ամփոփելով վերոնշյալը՝ տեղեկացնում ենք, որ 2024 թվականին ճանապարհային ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման նպատակով «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աշխատակիցների շուրջ 60%-ը մասնակցել է վերապատրաստումներին և դասընթացներին:

8. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024 թվականի ընթացքում Հիմնադրամը թվով 37 քաղաքացիական գործերով դատական վարույթներին մասնակցել է որպես հայցվոր, պատասխանող կամ երրորդ անձ, որոնցից՝ թվով 14 գործերով որպես ՀՀ ՏԿԵ նախարարության ներկայացուցիչ:

2024 թվականի ընթացքում Հիմնադրամը ներգրավվել է որպես տուժող թվով 2 քրեական վարույթներում:

Հիմնադրամի կողմից 2024 թվականի ընթացքում, գերակա շահ ճանաչված հողամասերի օտարման պահանջով տարբեր ծրագրերով ներկայացվել են հայցադիմումներ և ընդունվել են դատական ակտեր, մասնավորապես.

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր Տրանշ 2 Ծրագրի շրջանակներում (8 կմ հատված) կայացվել է թվով 2 դատական ակտ:

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր Տրանշ 2 Ծրագրի շրջանակներում (34 կմ հատված) ներկայացվել է թվով 44 հայցադիմում, կայացվել է թվով 41 դատական ակտ:

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր Տրանշ 3 Ծրագրի շրջանակներում (ԵՆԲ, Բենիամինի բնակավայրում մոտ 2 կմ հնագիտական վայրը շրջանցող հատված)՝ ներկայացվել է թվով 16 հայցադիմում, կայացվել է թվով 15 դատական ակտ:

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր Տրանշ 4 Ծրագրի շրջանակներում (Քաջարան-Ագարակ հատված)՝ ներկայացվել է թվով 21 հայցադիմում, կայացվել է թվով 24 դատական ակտ:

2024 թվականի ընթացքում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից մշակվել են ՀՀ կառավարության որոշման թվով 14 նախագծեր:

9. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամն ակտիվորեն լուսաբանում է ճանապարհային ոլորտի ծրագրերը և միջոցառումները՝ սերտորեն համագործակցելով լրատվամիջոցների հետ, ինչպես նաև օգտագործելով հանրության հետ հաղորդակցության տարբեր գործիքներ:

2024 թվականի ընթացքում զանգվածային լրատվամիջոցները (ԶԼՄ) **329** անդրադարձ են կատարել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին, վերջինիս կողմից իրականացվող ծրագրերին, այդ թվում՝ 65-ը՝ հեռուստառեպորտաժի ձևաչափով:

Հաշվետու ժամանակաշրջանում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամն իր պաշտոնական կայքի, սոցիալական հարթակների և մամուլի հաղորդագրությունների միջոցով հանրությանը և ԶԼՄ-ներին տրամադրել է շուրջ **550** ծանուցում ճանապարհների անցանելիության վերաբերյալ:

Հրապարակվել է **80** հայտարարություն ճանապարհային ոլորտի մրցույթների, հանրային լսումների և այլ թեմաների վերաբերյալ:

Հիմնադրամը պատասխանել է լրագրողների՝ «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով, էլեկտրոնային փոստով ստացված և բանավոր հարցումներին, ինչպես նաև քաղաքացիների՝ հիմնադրամի սոցիարթակներին ուղղված հարցադրումներին: